

# Ազգային


ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1998 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 24 ՕԳՈՍՏՈՍ 2015  
• VOL. XXXVI, NO 1998 • LUNDI, 24 AOÛT 2015 • MONDAY, AUGUST 24, 2015

1915-2015  
ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
100-ՐԳ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

## Յովիկ Աբրահամյան ընդունած է ռուս գործարարներ



Հայաստանի Հանրապետության վարչապետ Յովիկ Աբրահամյան Ուրբաթ՝ 14 Օգոստոս 2015-ին, ընդունած է Ռուսիայից եկած խումբ մը գործարարներ:

Կառավարության տեղեկատվության եւ հասարակության հետ կապերու վարչության փոխանցումով՝ գրուցակիցները քննարկած են Հայաստանի մեջ քանի մը մեծ ծրագիրներու մեջ ներդրումներու կարելիությունը:

Վարչապետը կառավարության անունով հիւրերուն պատրաստակամություն յայտնած է աջակցելու տարբեր մարզերու մեջ անոնց հաւանական ներդրումային ծրագիրներու իրականացման:

## Հայ կրօնաւորներու նուիրուած դրոշմաթուղթեր պիտի հրապարակուի

«ՓանԱրմինիըն» կը հաղորդէ, որ Վատիկանի դրոշմաթուղթերու բաժանմունքը հաղորդած է, թէ երկու հայ կրօնաւորներու՝ երանելի Իգնատիոս արք. Մալոյեանի եւ Ս. Գրիգոր Նարեկացիի նուիրուած դրոշմաթուղթեր պիտի հրապարակուի:



Յիշենք նաեւ, որ այս տարի 100-ամեակն էր Հայոց Ցեղասպանության օրերուն նահատակուած Մալոյեանի սպանության, իսկ այս տարւան Ապրիլին, Յոմի Ֆրանչիսկո Պապը Տիեզերական եկեղեցւոյ վարդապետ հռչակեց Ս. Գրիգոր Նարեկացիին, Վատիկանի Ս. Պետրոս տաճարին մեջ, Հայոց Ցեղասպանության 100-ամեակին նուիրուած պատարագին ընթացքին:

## Լ. Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւն. «Հակառակորդին աշխուժութիւնը ճնշուած է»

9-էն 15 օգոստոսի ժամանակաշրջանին ընթացքին, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպեյճանի հակամարտ գործերու շփման գիծին վրայ ատրպեյճանական բանակի յառաջապահ ստորաբաժանումները զինադադարը խախտած են շուրջ 1000 անգամ, որուն ընթացքին, տարբեր տրամաչափի հրաձգային եւ հրետանային զինատեսակներէ եւ ականանետերէ, հայ դիրքապահներուն ուղղութեամբ արձակած են աւելի քան 18 հազար կրակոց: Այս մասին կը հաղորդէ Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը:



Պաշտպանութեան բանակի յառաջապահ գործառններուն համարժեք պատասխան- գործողութիւններուն իբրեւ հետեւանք՝ հակառակորդին աշխուժութիւնը ճնշուած է:

## Հայաստան-Իրան ելեկտրականութեան հաղորդման երրորդ գիծի կառուցման համաձայնագիր

«Արմէնփրէս»՝ վկայակոչելով իրանեան «Մեիր» լրատու գործակալութիւնը, կը հաղորդէ, որ իրանեան «Սանիր» ընկերութիւնը եւ Հայաստանի ուժանիւթի եւ բնական պաշարներու նախարարութիւնը ներկայացնող Բարձրավոյթ ելեկտրականութեան ցանցեր ընկերութիւնը վերաստորագրած են Իրան-Հայաստան ելեկտրականութեան հաղորդման 3-րդ բարձրավոյթ գիծի կառուցման վերաբերեալ համաձայնագիրը:



107 միլիոն եւրօ արժողութեամբ համաձայնագիրը ունի ռազմավարական նշանակութիւն եւ կը նախատեսուի աւարտին հասցնել 24 ամիսէն:

Իրանի Արտածումներու դրամատունը ստանձնած է նախագիծի ֆինանսաւորման 70 առ հարիւրը, իսկ մնացեալ մասը՝ «Սանիր» ընկերութիւնը:

Իրանեան լրատուամիջոցին համաձայն, ծրագիրով կը նախատեսուի իրանեան

Ելեկտրական ցանցը կապել նաեւ Վրաստանի եւ Ռուսիոյ հետ, ինչ որ կարելի պիտի դարձնէ Իրանէն ելեկտրականութեան արտածումը կովկասեան երկիրներ:

## Քեսապի մեջ՝ խաղողօրհնէք եւ մատաղօրհնէք

Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին առիթով, Կիրակի՝ 16 Օգոստոս 2015-ին, Եսկիւրէնի (Ներքի գիւղ) Ս.Աստուածածին եկեղեցւոյ մեջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Շահան Սրբ. Արք. Սարգիսեանի:

Յաւարտ Ս. Պատարագին տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ մատուցուեցաւ Ս. Հաղորդութիւն:

Ապա եկեղեցւոյ կից գտնուող հնադարեան Սօսիին տակ տեղի ունեցաւ աւանդական խաղողօրհնէքի եւ մատաղօրհնէքի արարողութիւն:

Այս մասին կը հաղորդէ Սուրիոյ «Գանձասար» շաբաթաթերթը:

Քեսապի երիտասարդներ գիշերուայ ուշ ժամերէն սկսեալ լծուած էին Հարիսան պատրաստելու կամաւոր աշխատանքին:

Հաւատացեալները, առաւօտեան վաղ ժամերէն, իբրեւ ուխտաւորներ, հաւաքուած էին Եսկիւրէնի ուխտավայր հաղորդակից ըլլալու համար օրուան խորհուրդին եւ վայելելու համեղ Հարիսան ու օրհնուած խաղողը:



# Աչքակապուրիսն թուրքական ձեռով

## ՅԱԿՈՔ ԱԻԵՏԻՔԵԱՆ

Վերլուծելով Իրաքի եւ Սիրիայի քրտերի դեմ Երտողանի շղթայագերծած պատերազմը, միջազգային փորձագետների եզրակացությունը գրեթե նոյնական է գոնե մեկ հարցում սարսափած վերջին խորհրդարանական ընտրություններում քրտական ժողովրդական-դեմոկրատական կուսակցության (HDP) տպաւորիչ՝ 13 տոկոսի արդիւնքից, Երտողանը յառաջիկայ Նոյեմբերին նախատեսուող Նոր ընտրություններից առաջ ցանկանում է գրգռիչ գործողություններով ապստամբության մղել ներսի քրտերին, ճնշել եւ հասնել այն բանին, որ նրանց քաղաքական ուժերը համախմբող կուսակցությունը չհասնի խորհրդարանական աթոռներին:

Նման եզրակացության համար հիմք են ծառայում ոչ միայն հակաքրտական օդային ու ցամաքային ռմբահարումները, այլև քրտական կուսակցությանը միասնական ջանքերով մեկուսացնելու գլխավոր միւս կուսակցություններին վարչապետ Տաւուտօղլուի կոչը, ինչպէս նաեւ Ազգայնական շարժում կուսակցության ղեկավարի դիմումը երկրի գլխավոր դատախազին, որ կասեցնի քրտական կուսակցության գործունեությունը յառաջիկայ ընտրություններից առաջ, վերջինիս անուանը կայցնելով յայտնի մակդիրը՝ «ահաբեկչական»: Իրականում Անքարայի իշխանաւորները Թուրքիայի քրտերին գրգռում եւ ընդվզման են մղում ոչ միայն Սիրիայում եւ Իրաքում, այլև հենց երկրի ներսում, կազմակերպելով, ըստ քրտական բազմաթիւ աղբիւրների՝ որոնք դեռեւս համապատասխան ծառայությունների կողմից չեն լռեցուցւած, իրարայաջորդ ահաբեկումների պայթեցումների մի ամբողջ շարք, սկսած Տիարպեթիի յայտնի պայթեցումից մինչեւ Սուրուչի սպանողը:

Փաստօրէն Անքարայի իշխանաւորներն անցել են հակաքրտական կատաղի նոր պատերազմի, որը խոստանում է լինել նոյնքան արիւնալի, որքան վերջին 80-90 տարիներին եղածները: Միայն այն տարբերութեամբ, որ եթէ նախորդ բախումներում Անքարան կռոււմ էր երկրի քրտերի դեմ քրտաբնակ հարեւան

երկրների՝ Իրաքի, Սիրիայի եւ Իրանի իշխանութիւնների լուռ համաձայնութեամբ կամ քաջալերանքով, այժմ ստիպուած է կռուել նաեւ Իրաքում եւ Սիրիայում բաւական լայն ինքնավարութեամբ օժտուած եւ լաւապէս մարզուած նրանց ազգակիցների դեմ, բացառութեամբ Իրանի:

Սակայն նկատի ունենալով, որ Իրաքում եւ Սիրիայում քրտական զինուած կազմաւորումները ամենամարտունակ ուժն են «Իսլամական պետութիւն» ահաբեկչական հորդանների գլխապտոյտ յառաջխաղացումները ինչ-որ չափով զսպելու գործում, եւ, հետեւաբար, Միացեալ Նահանգների, Եւրոմիութեան երկրների եւ Իսրայելի համար բաւական կարեւոր ներկայութիւն տարածաշրջանում, Երտողանը քրտերին ծնկի բերելու իր ցանկութիւնը աշխարհին ներկայացնում է «Իսլամական պետութեան» դեմ պայքարելու քօղի տակ:

Բազմաթիւ են վկայութիւնները դէպի հարաւ ու դէպի հարաւ,արեւելք սահմանները հատող թուրքական ռազմօդանաւերի բուն թիրախների՝ քրտական յենակետերի ռմբակոծման մասին:

Առաւել շատ են տեղեկութիւնները Սիրիայից եւ Իրաքից Թուրքիա մտնող եւ հակառակ ուղղութեամբ ելումուտ անող «Իսլամական պետութեան» ահաբեկչների մասին, նոյնիսկ՝ թուրքական հիւանդանոցներում նրանց վիրաւորների բուժման վերաբերեալ:

Սակայն Արեւմուտքը կոյր աչք եւ խուլ ականջ է ձեւանում, ձեւացնելով, թէ չի նկատում Անքարայի աչքակապուրիսները: Այնինչ նրանց համապատասխան ծառայությունները բոլորից լաւ գիտեն թուրքական գործողությունների էութիւնը: Արեւմուտքի համար կարեւորն այն է, որ Թուրքիան պաշտօնապէս յայտարարել է պատերազմ «Իսլամական պետութեան» դեմ, ինչը արեւմտեան երկրների հասարակական կարծիքի սրտով է:

Մինչեւ ե՞րբ կշարունակուի այս վիճակը:  
Հաւանաբար մինչեւ Իրանի դեմ պատժամիջոցների վերացման ժամկետի աւարտը:

«Ազգ»

## Թուրքիա այցելող Հայաստանցիներու թիւը կը նուազի



2015-ի Յունիսին Թուրքիա այցելած է 4 254 հայաստանցի, ինչը 34 տոկոսով պակաս է նախորդ տարւան նոյն ժամանակահատուածի համեմատ: Նախորդ տարի Յունիսին Թուրքիա այցելած էր 6 424 հայաստանցի: Այս մասին կը յայտնէ NEWS.am-ը վկայակոչելով Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան տրամադրած տուեալները:

Իսկ 2015-ի Յունուար-Յունիս ամիսներուն Թուրքիա այցելած հայաստանցիներու թիւը նախորդ տարուան համեմատ նուազած է 32 տոկոսով՝ կազմելով 18 524 հոգի: Նախորդ տարի նոյն ժամանակահատուածին Թուրքիա այցելած էր 27 152 հայաստանցի:

## «Արի Տուն» ծրագրի 5-րդ փուլի մասնակիցներն այցելեցին պաշտպանութեան նախարարութիւն

ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Արի Տուն» ծրագրի 5-րդ փուլի մասնակիցները հիւրընկալուեցին ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնում:

Չերմօրէն ողջունելով աշխարհի տարբեր երկրներից Հայրենիք այցելած արիտունցիներին՝ Սէյրան Օհանեանը կարեւորեց նման հանդիպումները սփիւռքի պատանիներին ու աղջիկներին հայոց բանակի անցած ուղու ու կերտած պատմութեանը ծանօթացնելու, նրանց հայրենասիրական դաստիարակութեանը մասնակցելու գործում:

Պաշտպանութեան նախարարը բարձր գնահատեց Հայոց պետութեան ամրապնդման, բանակի ոգին ու կորովը բարձր պահելու, դժուարին պահերին սատար կանգնելու հարցում Սփիւռքի պատրաստակամութիւնը: Նա ներկայացրեց հայկական բանակին, Հայաստանի անվտանգութեանը վերաբերող բազմաթիւ արդիական խնդիրներն ու նշեց, որ Սփիւռքի բարոյական աջակցութիւնը կարող է մեծապէս նպաստել դրանց լուծմանը: Սէյրան Օհանեանը անդրադարձաւ ներկայ զարգացումներին եւ մասնաւորապէս ասաց, «Թող հայ ժողովուրդը վստահ լինի, որ հայկական բանակը իր առաջ դրուած խնդիրը մեր իսկ ժողովրդի, հարազատների խաղաղութիւնը, անվտանգութիւնը ապա-



հովել եւ ապահովելու է»:

Սփիւռքի Նախարար Հրանտյ Հակոբեանը շնորհակալութիւն յայտնեց պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանին ջերմ ընդունելութեան եւ սերտ համագործակցութեան համար, արդէն 7-րդ տարի «Արի Տուն» ծրագրի մասնակիցների հետ հանդիպելու եւ Հայոց բանակի տարբեր զօրամասերում նրանց հիւրընկալելու համար: Նա հաւաստեց, որ իւրա-

բանչիւր նման հանդիպման եւ զինուորական առօրեայի հետ առնչուելու շնորհիւ սփիւռքահայ պատանիների ու աղջիկների հոգում աւելի է զօրանում հայրենասիրութիւնը, Հայրենիքի թիկունքն ամուր պահելու պատրաստակամութիւնը:

Հարցուպատասխանից յետոյ արիտունցիներն այցելեցին թիւ N զօրամաս եւ ծանօթացան բանակի առօրեային ու ճաշակեցին զինուորական կերակուրները:

**ԱՊՈՂՆՅ**  
Շաբաթաթերթ

**ABAKA**

**Hebdomadaire Arménien**  
Armenian Weekly ISSN 0382-9251

*Publié par /Published by*  
Le Centre de Publication Tékéyan  
825 rue Manoogian, Saint-Laurent,  
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162  
e-mail: abaka@bellnet.ca  
www.tekeyanmontreal.ca

---

**Պատասխանատու խմբագիր՝  
ԱԻԵՏԻՔ ԱԼԳՉԱԼԵԱՆ**

**Ծանուցումներու,  
նուիրատուութիւններու եւ  
գրասենեակի պատասխանատու՝  
ՍԱԼԻՒ ՄԱՐԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝  
ՄԱՍԵՍ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ**

Canada  
2nd Class \$80 (QC & ON)  
1ère classe/first class \$90  
U.S.A. 1st class (US)\$90  
Autres pays/Other countries:  
1st class (US)\$120  
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

**“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”**

Այս յուշերուն նախորդ հատուածները տեսնել Ապագայ 13 Ապրիլ 2015 եւ Ապագայ 29 Յունիս 2015 թիւերուն մէջ:

# Իմ Յուշերս

(Շարունակութիւն 3)

## Գլուխ 2

### Եգիպտոսի Մէջ Վերջին Տասներկու Տարիներս Մինչեւ 1961

Ա. Բաժին

Ներգաղթ, Միջազգային Վերիվայրումներ.

#### ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայկազնեան Կրթարանէն, 1949-ին շրջանաւարտութենէս ետք. յաջորդող 12 տարիները ճակատագրական տարողութեամբ կարելոր, ծանր եւ որոշիչ տարիներ պիտի ըլլային թէ անձնապէս ինձի համար, եւ թէ հայ ժողովուրդին համար, խօսելով մանաւանդ սփիւռքին մասին:

Յետադարձ այս ակնարկը նետած միջոցիս, կը նկատեմ թէ որքան դժուար է, աւելի ճիշդը անկարելի է, իմաստաւորել այդ տարիներուն վերաբերեալ յուշերս առանց յատուկ ուշադրութեամբ անդրադառնալու այդ տարիներուն տեղի ունեցած հայկական եւ միջազգային եղելութիւններուն որոնք հիմնովին ազդեցին իմ կեանքիս վրայ եւ սակայն շատ աւելի լայն հասկացողութեամբ ազդեցին ամբողջ հայութեան վրայ: Զանի որ այս յուշերս գրելուս նպատակը երբեք լոկ անձնական օրագիր մը պատրաստել եւ գրի առնելը չէ, այլ մանաւանդ վաւերագրական տուեալներ տալն է ներկայ թէ ապագայ հետաքրքիր ընթերցողին կամ ազգային կեանքը վերլուծողներուն համար, անհրաժեշտ պիտի նկատեմ նախ, որոշ չափով, անկախաբար անձնական կեանքէս, անդրադառնալ այդ տասներկու տարիներու ժամանակաշրջանի ընթացքին պատահած մեծ իրադարձութեանց, եւ ապա այդ համայնապատկերին վրայ գետեղել ուսման տարիներս եւ անձնական փորձառութիւններս, ազգային կեանքի ծիրէն ներս:

Հետեւաբար այս Ա. Բաժնին մէջ պիտի ներկայացնեմ առաւելաբար, վերոյիշեալ մեծ իրադարձութեանց համայնապատկերը:

#### 1947-Ի ՆԵՐԳԱՂԹԸ ԿԱՍ ՄԵՇ ՆԵՐԳԱՂԹԸ

Զսաներորդ դարու կիսուն պատահած մօտ երեք չորս տարի տեւող աշխարհատարած աննախադէպ այս շարժումը ցնցեց ամբողջ հայ աշխարհը:

Ամերիկաներէն, Եւրոպայէն եւ Միջին Արեւելքէն, աննախընթաց եւ հսկայական կազմակերպութեամբ մօտ հարիւր յիսուն հազար հայեր մեծ «կարավան»ներով վերադարձան Հայաստան հակառակ անոր որ Հայաստան համաշխարհային պատերազմէն հազիւ թէ նոր դուրս եկած էր, ենթարկուելէ վերջ մարդկային եւ այլ խոշոր վնասներու: Բնականաբար, թէ վերոյիշեալ կարեւոր բոլոր գաղութները, թէ այս խոշոր շարժման հետեւանքով անխուսափելիօրէն բաժնուած ընտանիքները եւ թէ ինքը Հայաստանը պիտի ենթարկուէին խոշոր ցնցումներու, իբրեւ ներգաղթի հետեւանք:

Ներգաղթի այս աննախընթաց իրադարձութեան մասին, տարօրինակ կը գտնեմ թէ այսքան տարիներ ետք, գոնէ ես տեղեակ չեմ որ, մինչեւ այսօր, հիմնական վերլուծողական, եւ տեղեկագրական աշխատանք մը տարուած ըլլայ: Այս պակասը անպայման պէտք է լրացնել պատմութեան սիրոյն: Այդ շրջանին եւ անկէ ետք տասներկու տարիներով հայ աշխարհը կազմող բոլոր մասնիկները ենթարկուեցան հոգեբանական, քաղաքական, տնտեսական, ընտանեկան յարաբերութիւններու, հայրենասիրական արտայայտութիւններու եւ վեճերու իրերայաջորդ խոր ցնցումներու:

Այս բոլորը պատկերացնելու համար եւ մանաւանդ այսօրուայ եօթանասունէն վար տարիքով որբէւ հայու բացատրութիւն տալու համար, անհրաժեշտ է հակիրճ կերպով վերարտադրել այդ օրերու հիմնական կարգ մը տուեալները:

Համաշխարհային երկրորդ պատերազմը վեր-

ջացած էր 1945 Մայիսի 8-ին ջախջախիչ յաղթանակովը նացի Գերմանիոյ դէմ պատերազմող դաշնակիցներուն որոնց գլուխը կը գտնուէին հինգ մեծ պետութիւններ եւ այս վերջիններուն մէջ յատկապէս Սովետական Միութիւնը, որուն մաս կը կազմէր Հայաստանը, եւ Միացեալ Նահանգները, որոնք երկուքը ինքնաբերաբար տիրական դեր պիտի ունենային միջազգային քաղաքական կեանքին մէջ յաջորդող տասներկու տարիներուն ընթացքին:

Այդ օրերուն, այսինքն յետպատերազմական առաջին քանի մը տարիներուն ընթացքին, պէտք է պատկերացնել թէ յաղթանակէն զինովցած տոնական բարեկամական քաղաքական ընդհանուր մթնոլորտ մը կը տիրէր աշխարհին մէջ եւ տակաւին չէր ստեղծուած այն յանկարծական փոփոխութիւնը ուր Արեւմտեան երկիրները պիտի ամբողջովին փոխելով իրենց կեցուածքը, սաստիկ եւ սուր թշնամական դիրք պիտի որդեգրէին խորհրդային Միութեան դէմ:

Խորհրդային Հայաստանը մաս կազմելով խորհրդային Միութեան, բնական էր հետեւաբար որ յետպատերազմեան այդ սկիզբի օրերուն սփիւռքահայութիւնը եւս իր ամբողջութեան մէջ, հպարտօրէն ինքզինք բաժնեկից կը նկատէր մեծ պատերազմի այս «Մեծ Յաղթանակին»:

Օրինակի համար այսօր դեռեւս անհաւատալի թուի, եւ սակայն իրականութիւնը այն է, որ այդ օրերուն, Հ.Յ.Դ.-ի Գահիրէի պաշտօնաթերթ Յունասերը, շաշարէն կը գրէր «Սթայլինի բարեմասնութեան մասին»: Այս մասին պիտի բերին անդրադառնամ աւելի վերջ, երբ գրեմ Նոյն թերթին եւ իր շրջանակին, քանի մը տարի ետք որդեգրած բոլորովին շրջուած կեցուածքին մասին:

Ահա այսպէս, յաղթանակով եւ Սովետական Հայաստանով խանդավառ հայ աշխարհին մէջ էր որ յանկարծ տարածուեցաւ լուրը թէ Հայաստանի պետութիւնը (ինչ որ բնականաբար կը նշանակէր Սովետական Միութիւնը) որոշած էր կազմակերպել սփիւռքահայութեան մասսայական հայրենադարձը դէպի «Հայաստան երկիր դրախտավայր»: Դիւրին չէ՞ հասկնալ այն անզուսպելի խանդավառութիւնը որ այդ օրերուն պայթեցաւ անմիջապէս ամբողջ սփիւռքահայ աշխարհին մէջ, մանաւանդ որ Նոյն այդ օրերուն, յատկապէս Միջին Արեւելքի մէջ տեղական յեղափոխական եւ ազգայնական խորունկ շարժումներ, ցոյցեր, կոտորածներ, թափ կ'առնէին, մինչ Ֆրանսա թէ Անգլիա իրենց ոյժերը նախապէս գրաւած Միջին Արեւելքի երկիրներէն ետ կանչելով եւ այդ շրջանները իրենց ճակատագրին թողելով ճամբայ կը հարթէին որպէսզի ստեղծուէր Իսրայէլի պետութիւնը որուն կը յաջորդէր Իրաք-Իսրայէլեան պատերազմը, Սուէզի տագնապը եւ այլն, եւ այլն:

#### ԱՐԴԵՕՔ ԻՆՉ ԷԻՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մինչ սփիւռքահայութիւնը առաւելաբար անկեղծ խանդավառութեան ալիքով մը դիմաւորեց հայրենադարձութեան ներգաղթի ծանուցումը, որոշ էր թէ այսպիսի ծանրակշիռ եւ մեծ տարողութեամբ աննախընթաց որոշում չէր կրնար պարզ եւ թեթեւ տուեալներու վրայ հիմնուած ըլլալ: Յատկապէս այդ օրերու խորհրդային Միութիւնը առաւելաբար խորհրդաւոր եւ կոպիտ կառավարման պայմաններուն տակ գործող պետութիւն մըն էր, հետեւաբար անոր առած այս մեծ քայլը բնականաբար լուրջ հարցադրման



**Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնական Վարչական Ժողովի երկարամեայ նախկին անդամ եւ փոխ-նախագահ մինչեւ 2010, այժմ Կ.Վ.Ժ.-ի վաստակաւոր (Emeritus) անդամ: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան երկարամեայ նախկին անդամ եւ Ատենապետ մինչեւ 1995: Գանատայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Թեմի հիմնադիրներէն եւ Թեմական Խորհուրդի անդրանիկ Ատենապետ, ապա հռչակուած Պատուոյ Ատենապետ: Ամերիկայի եւ Գանատայի Թ.Մ. Միութեան Կեդրոնական Վարչութեան հիմնադիր անդամ: Մոնթրէալի Թ.Մ. Միութեան հիմնադիրներէն, Ատենապետ այժմ Պատուոյ Նախագահ: Մոնթրէալի Ալէք Մանուկեան Վարժարանի Հիմնադիր եւ Գործադիր Նախագահ մինչեւ 2011:**

դուռ կը բանայ բոլորին միտքերուն մէջ, այդ որոշումին առաջնորդող հաւանական տարբեր պատճառներուն մասին:

Անձնապէս ես այս մասին որբէւ հաստատ տեղեկութիւն չունիմ եւ նաեւ կը կասկածիմ թէ մինչեւ այսօր հաւաստի որբէւ տեղեկութիւններ բացայայտուած ըլլան այս կապակցութեամբ:

Կան մի քանի իրողութիւններ եւ հաւանական կարելիութիւններ որոնք կը փոխանցեմ ընթերցողին, որ սակայն պարտի յատուկ հետազօտական աշխատանքով հաստատել անոնց վաւերական հիմքերը եւ հետապնդել աւելի մանրամասն տեղեկութիւններ:

Տուեալներէն մեկը այն է թէ 1945-ին, պատերազմի աւարտին, խորհրդային Միութեան բանակը Կովկասեան ճակատին վրայ, Հայաստանի սահմաններու երկայնքին պատրաստ էր գրոհ տալ դէպի Թուրքիոյ կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստանի հողերը, եւ այդ պարագային, հասկնալի է թէ անհրաժեշտ պիտի ըլլար այդ շրջանները բնակեցնելու համար քաջալերել Արեւմտահայերը վերադառնալու դէպի իրենց ջարդի շրջանին թողած հողերը: Այս մասին թէեւ ժամանակ առ ժամանակ գրուած է տարբեր առիթներով, սակայն նաեւ անձնապէս ինձի ըսուած է հաստատ կերպով, մի քանի կարեւոր անձնաւորութեանց կողմէ Հայաստան կատարած իմ այցելութեանս ընթացքին: Յատկապէս ըսուած է ինձի թէ այդ օրերուն Թուրքերը իրենց զինուորական պաշտպանութեան ոյժերը քիլով մեթրերով ետ քաշած էին սահմանէն եւ հայ սովետական բանակը ամէն ժամ հրահանգի կ'սպասէր մտնելու եւ գրաւելու իր պապեանական հողերը: Այդ շրջանին էր սակայն որ յանկարծ 1947-ին հռչակուեցաւ Թրումընեան Ամերիկեան վարդապետութիւնը, որուն հետեւանքով Թուրքիա ստացաւ բացառիկ կարեւորութիւն եւ ան կրցաւ յայտարարել թէ ոչ իսկ մէկ թիզ հող պիտի զիջէր Սովետական Միութեան: Կացուութիւնը դժբախտաբար մնաց այդպէս մինչեւ մեր օրերը:

Երկրորդ տուեալը ներգաղթի պատճառներուն մասին այն է թէ 1945-ին Հայաստանի բնակչութեան թիւը նուազած էր մեծ չափով, յատկապէս քանի մը հարիւր հազար զոհ տուած ըլլալով «հայրենական պատերազմին», եւ ըստ խորհրդային Միութեան ներքին օրէնքներուն, ըստ երեւոյթի Հայաստանը կրնար կորսնցնել Հանրապետութիւն մնալու իր իրաւունքը: Ըսուած է թէ այդ ժամանակ Անաստաս Միկոյեան անձնապէս

# Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Յայոց Գրիգոր Պետրոս Ի. Պատրիարքի Գահակալութիւնը



Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց տորքնտիր Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս պատրիարքի գահակալութեան արարողակարգը տեղի ունեցաւ Կիրակի, Օգոստոս 9-ին, երեկոյեան ժամը 5-ին, Չմմառու Տիրամօր վանքի շրջափակը՝ Յայ կաթողիկէ պատրիարքական եկեղեցւոյ սինհոդոսի արքեպիսկոպոսներուն եւ եպիսկոպոսներուն հրաւերով: Սրբազան արարողութեան ներկայ էին Յռմի Ս. Աթոռի Արեւելեան եկեղեցիներու ժողովի ներկայացուցիչներ, Լիբանանի մէջ պապական նուիրակը, Ամենայն Յայոց Գարեգին Բ. կաթողիկոսի ներկայացուցիչը, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս, հայ եւ օտարազգի բարձրաստիճան հոգեւորականներ, առաջնորդներ, Չմմառու պատրիարքական կղերի միաբանութեան վարչական հայրեր, միաբան հայրեր, համայնքային ներկայացուցիչներ, պետական եւ զինուորական անձնակազմներ, երեսփոխաններ, կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

## Ուորլիք. «Միացեալ Նահանգներ Լեռնային Ղարաբաղի գօտիին մէջ զինադադարի դրութեան պահպանման կոչ կ'ուղղեն»



ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճեյմս Ուորլիք պատասխանելով «Արմէնփրէս»-ի այն հարցումին, թէ Միացեալ Նահանգներ ինչպե՞ս կը գնահատեն այն հանգամանքը, որ Պաթուրի մէջ Եւրոպական խաղերու աւարտէն ետք Ատրպէյճան դարձեալ կ'ապակայունացնէ իրավիճակը եւ կը խախտէ զինադադարը թէ՛ Յայաստան-Ատրպէյճան սահմանին, թէ՛ ղարաբաղեան-ատրպէյճանական շփման գիծին վրայ, յայտարարած է, որ Միացեալ Նահանգներ կ'ուզեն, որ հայ-ատրպէյճանական սահմանին եւ շփման գիծին վրայ լարուածութիւնը նուազի, պահպանուի զինադադարի դրութիւնը եւ կողմերը բանակցութեան ու երկխօսութեան ճամբով հասնին տագնապին լուծման:

«Միացեալ Նահանգներ բազմիցս

կողմերուն կոչ ուղղած են՝ ձեռնարկելու բոլոր միջոցներուն, որպէսզի պահպանուի զինադադարի դրութիւնը: Ասիկա այն կոչն է, որ կատարած են համանախագահները Յայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն շրջան վերջին այցելութեան ժամանակ: Մենք յոյս ունինք, որ կողմերը պիտի ցուցաբերեն զսպուածութիւն, ինչպէս ատիկա կատարուած էր վերջին ամիսներուն, ինչ որ միայն պիտի նպաստէ խնդիրին վերջնական լուծում տալու մեր ջանքերուն: Եթէ կողմերը իսկապէս կ'ուզեն լուծում բանակցութիւններու ճամբով, ապա անոնք պէտք է նուազեցնեն լարուածութիւնը թէ՛ ղարաբաղեան-ատրպէյճանական շփման գիծին, թէ՛ Յայաստան-Ատրպէյճան սահմանին վրայ», ըսած է Ուորլիք:

# Վալերի Պուլայե. «Ես երկրորդ Ցեղասպանութեան մը դիտորդը պիտի չըլլամ»

1915թ.-էն ետք պատմութիւնը պէտք չէ կրկնուի: Այս մասին իր էջին գրած է Ֆրանսայի խորհրդարանի պատգամաւոր Վալերի Պուլայե:

«Իմ պահանջով Արեւելքի քրիստոնէաներուն աջակցութեան ուղերձը տեղադրուած էր Մարտի 11-12-րդ ենթաշրջանի վարչակազմի ճակատամարտ՝ Յայոց Ցեղասպանութեան յիշատակի պաստառի կողքին:

Իբրեւ պատգամաւոր՝ ես առաջինն էի, որ մէկ տարի առաջ՝ 2014թ. Յուլիս 23-ին, կառավարութեան հարց ուղղեցի Արեւելքի քրիստոնէաներու վիճակին մասին եւ օգտագործեցի «ցեղասպանութիւն» եզրը: Իսկ 2014թ. Սեպտեմբերին ես կազմակերպեցի Արեւելքի քրիստոնէաներու աջակցութեան երեկոյ:

Թոյլ չենք տար, որ 100 տարի անց պատմութիւնը կրկնուի: Երկու տարի անց տարածաշրջանը լքած են գրեթէ բոլոր քրիստոնէաները, որպէսզի խուսափին հետեւանքներէ:



րեն:

Քրիստոնէայ փոքրամասնութիւնը կը պայքարի, իսկ անոր պայքարը համընդհանուր պայքար է հալածանքներու դէմ, ատիկա մեր քաղաքակրթութեան պայքարն է:

Շատոնց ժամանակն է վերջ դնելու համընդհանուր անտարբերութեան:

Ես պիտի չըլլեմ, կրկնուող պատմութեան դիտորդը պիտի չըլլամ»:

## Սէյրան Օհանեան այցելեց Մուսա Լերան յուշահամալիր

Մուսա Լերան հերոսամարտի 100-ամեակին ընդառաջ՝ հերոսամարտի մասնակիցներուն անկոտորում կամքը, ազատագրական ոգին եւ արիւթիւնը խորհրդանշող յուշահամալիրի տարածքին մէջ սկսած են շինարարական եւ բարեկարգման լայնածաւալ աշխատանքներ:



Յուշարձանի եւ հերոսամարտի պատմութիւնը ներկայացնող թանգարանի շինարարութեան կապուած հարցերուն եւ մանրամասնութիւններուն, արդիականացման աշխատանքներու ընթացքին տեղւոյն վրայ ծանօթանալու նպատակով Երեքշաբթի՝ 11 Օգոստոս 2015-ին, Մուսա լերան յուշահամալիր այցելեց պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան՝ նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տօնոյեանի, բարձրաստիճան այլ պաշտօնատարներու, զինուորականներու ընկերակցութեամբ:

Քննարկելով տարածքին բարեկարգման կապուած առաջարկներն ու դիտարկումները, աշխատանքներու կատարման յաջողականութիւնն ու ժամանակացոյցը, Օհանեան անձնակազմին տուաւ յանձնարարականներ՝ նշուած ժամկետներուն մէջ աշխատանքները աւարտին հասցնելու նպատակով:


## Դաւիթ Բաբայեան. «Ատրպէյճանցիներուն կողմէ հրահրուող սահմանային լարուածութիւնը ապրելակերպ դարձած է»

Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան նախագահի մամլոյ քարտուղար Դաւիթ Բաբայեանը «Երկիր»-ին հետ տեղի ունեցած զրոյցի մը ընթացքին նշեց, որ ատրպէյճանցիներուն կողմէ մշտապէս հրահրուող սահմանային լարուածութիւնը արդէն որեւէ յատուկ բանի հետ կապուած չէ: Ըստ Բաբայեանի, մեր դրացիներուն այդպիսի պահուածքը ապրելակերպ դարձած է:

«Մենք երբեք նախայարձակ չենք եղած, միայն հակահարուած տուած ենք անոնց գործողութիւններուն: Վերջին քանի մը օրերուն ընթացքին սահմանը լարուած եղած է, բայց այդ մէկը արտառոց լարուածութիւն չէ, որովհետեւ նման պահուածք անոնց բնորոշ է եւ զարմանալի չէ», ըսաւ Բաբայեան: Ան նշեց նաեւ, որ սահմանային լարուածութիւնը թերեւս կապուած է անոր հետ, որ Ատրպէյճանի մէջ իրենք կը հետեւին քաղաքացիական գործիչներուն, լրագրող կը սպաննեն, ինչ որ պետական պատուէր է:

«Ամբողջ աշխարհը փաստօրէն լարուած է անոնց դէմ: Անոնք ալ, որպէսզի շեղեն միջազգային հանրութեան ուշադրութիւնը, սահմանային լարուածութեամբ կը փորձեն չէզոքացնել միջազգային հանրութեան ճնշումները», ըսաւ Դաւիթ Բաբայեան:

# Փերմեակով ընդունած է իր մեղքը



Գիւմրիի մէջ Չորեքշաբթի՝ 12 Օգոստոս-ին, մեկնարկած է 102-րդ ռուսական ռազմական զինծառայող Վալերի Փերմեակովի նկատմամբ քրեական գործով բաց դատական նիստը: Փերմեակովի նկատմամբ քրեական գործ յարուցած է նաեւ հայկական կողմը՝ ՀՀ քրեական օրէնսգիրքի 104-րդ յօդուածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու եւ ւաւելի անձանց սպանութիւն): Հայկական դատական ատեանները կը զբաղին արդէն Աւետիսեաններու սպանութեան գործով: Այդ գործով նախաքննութիւնը դեռ չէ աւարտած, դատական նիստի ժամկետները դեռ յայտնի չեն:

Նախագահող դատաւոր Ալեքսանդր Շելտեաւել տեղեկացուցած է ամբաստանեալին, ինչպէս նաեւ կողմերուն իրենց իրաւունքներուն մասին: Փերմեակովը դատարանի դահլիճին մէջ մեկուսացուած է ապակեպատ «պատնէշով»: Մեղադրեալը ընդունած է դատաւարութեան եւ ապօրինի զենք-զինամթերք կրելու մասով ներկայացուած մեղադրանքները: Դատարանը հարցուցած է. «Դուք ձեզի մեղաւոր կը համարե՞ք, ճի՞շդ են ներկայացուած ցուցմունքները»: Մեղադրեալը ըսած է. «Այո, ես ամէն ինչ կը հաստատեմ»: Միաժամանակ Փերմեակով հրաժարած է ցուցմունք տալ եւ հաստատել նախկին ցուցմունքը, որ տուած է նախաքննութեան ընթացքին, երբ ան ինքզինքը ամբողջութեամբ մեղաւոր ճանչցած է:

Ըստ Փերմեակովի ցուցմունքին, ան Աւետիսեաններու տան մէջ մնացած է 10-15 վայրկեան, տեղին ծանօթ չէ եղած: Չինծառայողը ուզած է անցնիլ հայ-թրքական սահմանը, սակայն սահմանապահները ձերբակալած են: Ըստ սղագրութեան, «Փերմեակով յայտարարած է, որ սկիզբը սպաննելու մտադրութիւն չէ ունեցած, այլ ուղղակի վախցնելու համար օդը կրակած է»: Աւետիսեաններու տունէն ան կ'ուզէր միայն դրամ գողնալ, իսկ մէկ այլ տունէ հագուստ՝ Թուրքիա, յետոյ Ռուսաստան հեռանալու նպատակով: Ինքնաձիգը վերցուցած է, որպէսզի շուները քշէ, յետագային մտադիր եղած է վաճառել զենքը: Պատահական տուն մտած է, մարդիկ քնացած եղած են, բայց արթնցած են: Ան վախցած է սպաննած է անոնց, ձգած ամէն ինչ եւ փախած: Փերմեակովը ըսած է, որ կ'ուզէր ընդհանրապէս խուսափիլ ծառայութենէն: Ան ըսած է, որ մեղսակից չունի, ինք որոշած է փախչիլ պահակակետէն անկէ քանի մը օր առաջ:

# Ստեփանակերտի ԹՈՒՄՕ կեդրոնը պիտի սկսի գործելու Սեպտեմբերին

Լ. Ղարաբաղի Հանրապետութեան վարչապետ Արա Յարութիւնեան՝ «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերութեան բաժնետիրոջ ներկայացուցիչ Ռաֆ Երիկեանի հետ 13 Օգոստոսին այցելած է Ստեփանակերտի ԹՈՒՄՕ կեդրոն՝ ծանօթանալու հոն տեղի ունեցող շինարարական աշխատանքներուն:



Շրջելով կեդրոնի սենեակներուն մէջ՝ վարչապետը իր գոհունակութիւնը յայտնած է կատարուած աշխատանքին վերաբերեալ եւ համապատասխան պաշտօնատարներու տուած է Նոր յանձնարարականներ, որպէսզի ուսումնական կեդրոնը կարելի ըլլայ օգտագործել Սեպտեմբերին:

Շենքին աւարտին մօտեցող վերակառուցման համար «Ղարաբաղ Տելեկոմ»-ը յատկացուցած է շուրջ 150 միլիոն դրամ, իսկ սարքաւորումները ձեռք բերուած են Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ներդրումով: Ըստ պատասխանատուներու զեկուցումներուն՝ Ստեփանակերտի ԹՈՒՄՕ կեդրոն կրնան յաճախել Արցախի 500-է աւելի 7-17 տարեկան երեխաներն ու պատանիներ:

# Հայ վարպետը փրկած է 1734 թուականի ջուլթակը

Պոսթընի ոստիկանութիւնը ջուլթակներու վարպետ եւ Նորգող ամբիկահայ Ֆիլիպ Ինճեանի շնորհիւ յայտնաբերած է 35 տարի առաջ Պոսթընի երաժշտական դպրոցէն գողցուած Ստրադիվարիուսի ջուլթակը, որ 1734 թուականի է: Այս մասին կը յայտնէ The Armenian mirror spectator-ը:



Հայ վարպետին դիմած է պատահական անցորդ մը եւ տեղեկացուցած, որ կ'ուզէ ջուլթակը վաճառել: Ուսումնասիրելով գործիքը Ինճեանը համոզուած է, որ այն գողցուած է եւ տեղեկացուցած է ոստիկանութեան աշխատակիցներուն: Պարզուած է, որ ոստիկանութիւնը 35 տարիէ ի վեր կը փնտռէ գողցուած ջուլթակը, բայց ապարդիւն:

Այդպիսով հայ վարպետը դարձած է ամերիկեան լուրերու գլխաւոր հերոս:

## Իմ Յուշերս...

Շար. էջ 3-էն

կարելոր դեր կատարած է Կեդրոնական Կառավարութեան մէջ, ներգաղթի թոյլտուութիւնը ապահովելու գործին մէջ, որպէսզի երկրին բնակչութեան թիւը բարձրացնելով ան կարողանայ շարունակել պահել Հանրապետական իր կառոյցը:

Եթէ այս ենթադրութիւնները ճիշդ են կան ոչ, պարագան այն եղաւ որ տարբեր երկիրներու կարգին, ներգաղթը կազմակերպուեցաւ նաեւ Եգիպտոսէն ուրկէ ի վերջոյ կարելոր թիւ մը, հինգէն տասը հազար կամ աւելի, հայեր (ճշգրիտ թիւը չ'ունիմ մտքիս մէջ), որոնցմէ կարելոր թիւ մը բարեկեցիկ պայմաններու մէջ ապրողներ էին, ծախսեցին տուն, տեղ, գործ եւայլն եւ երբեմն ամբողջ ընտանեկան պարագաներով եւ երբեմն ալ մէկ մասը միայն, գինովցնող խանդավառութեան մէջ երկու անգամով, սովետական Բոլսետա եւ Ռուսիա նաւերով մեկնեցան Հայաստան, Վրաստանի Պաթում նաւահանգիստին ճամբով:

Ներգաղթը սակայն քաղաքական եւ այլ պատճառներով, յանկարծ կասեցաւ: Եգիպտոսի պարագային, անմիջական պատճառը Եգիպտոսի մէջ ծայր տուած Թօլերայի համաճարակն էր:

Այդ օրերուն ներգաղթողները սակայն, դժբախտաբար յաճախ ապրեցան շատ դժուար տարիներ: Սկիզբի տարիները Սթալինի եւ Պերիայի թաթին տակ ստեղծուած դաժան ռեժիմի տարիներն էին որուն արտասահմանը տեղեակ չէր բնաւ:

Մինչ այդ մեր ընտանիքը սակայն անոնցմէ եր որ, հայրս իր գործը եւ մեր բնակարանային կալուածը ծախած, ամէն ինչ սնտուկներու մէջ տեղաւորած եւ կապուած վիճակի մէջ մէկ օրէն միւսը ներգաղթի յաջորդ նաւուն սպասման վիճակին մէջ էր: Այսպիսով ամբողջ ընտանիքը ահաւոր պարագութեան մէջ կը գտնէր ինքզինքը յանկարծ: Այդ պայմաններու մէջ եր որ, տակաւին պատանի, ես պիտի սկսէի իմ յաջորդական ուսման տարիներս դէպի բարձրագոյն ուսում:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԳՏՈՒՄԸ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ, ԵՒ ՑՈՒՐՏ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Սփիւռքահայ կեանքը յարաճուն կերպով այդ օրերէն սկսեալ, ինքզինք պիտի գտնէր ազգային իմաստով ձգտուած միջազգային հակամարտութեանց ծանր մթնոլորտի մը մէջ:

Արդարեւ Արեւելեան Համայնավար երկիրները գլխաւորութեամբ Սովետական Միութեան, ցուրտ պատերազմի որպէս մէկ ճակատը, սաստիկ հակամարտութեան քաղաքականութեան մէկ բեւեռը դարձան 1947-էն սկսեալ, մինչ Արեւմտեան երկիրները, ուր կը գտնուէր ամբողջ սփիւռքահայութիւնը, այդ հակամարտութեան միւս բեւեռը կը կազմէին:

Հայաստանը եւ Ս. Էջմիածինը գտնուելով Սովետական Միութեան սահմաններէն ներս, անխուսափելիօրէն Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւնները պիտի մտնէին չափազանց խորին հանգրուանի մը մէջ:

Յաջորդ բաժնին մէջ է որ պիտի նկարագրեմ

այն յարաճուն կերպով սաստկացող ծանրակշիռ պայթարները որոնք պիտի ստեղծուէին սփիւռքի մէջ քանի որ այս պայմաններուն տակ մինչ հայութիւնը պիտի ուզէր եւ պէտք էր պահել իր ազգային եւ եկեղեցական կապերը հայրենիքին եւ Ս. Էջմիածնայ հետ, Ամերիկեան գաղտնի գործակալութիւնները եւ C.I.A.ն բնականաբար պիտի ուզէր գործածել Սփիւռքահայութիւնը որպէս գործիք հակասովետական իր պայթարի ծիրին մէջ:

Դժբախտաբար, իսկապէս ալ Սփիւռքահայութեան մէջ Հ.Յ.Դ.ն ինկաւ այս թակարդին մէջ եւ հակահամայնավար, հակահայաստանեան եւ հակաէջմիածնի իր սրուած գործունեութեամբ առաջնորդող դեր կատարեց յաջորդող տարիներուն սփիւռքը երկուքի բաժնելու տխուր աշխատանքին մէջ: Այսօր Նոյնիսկ թէ մտածուի թէ նախընտրելի եւ մաղթելի պիտի ըլլար յանուն խաղաղութեան, չի խօսիլ կամ չի գրել այդ տխուր տարիներուն մասին, որոշ է սակայն թէ պատմութիւնը չի կրնար մոռցուիլ կամ վերատեսութեան ենթարկուիլ: Կատարուածները կատարուեցան դժբախտաբար եւ սփիւռքը առաջնորդուեցաւ դէպի սպառնիչ եւ անարդարանալի սաստիկ պայթարներու: Այդ պայթարներէն ստեղծուած յատկապէս ազգային-եկեղեցական անարդարանալի բաժանումները, մինչեւ այսօր կը պահեն դժբախտաբար իրենց վնասակար գոյութիւնը:

Այստեղ պէտք է կանգ առնեմ որպէսզի յաջորդ հատուածին, Բ. բաժնին մէջ, անցնիմ ուսումնական տարիներուս նկարագրականին եւ այդ տարիներուն պատահած ազգային, եկեղեցական մեծ տազնապներուն որոնց մէջ, պատահեցաւ որ սկսիմ հետզհետէ աւելի խոր չափով առնչուիլ:

(Շարունակելի 3)


# ԱՉՆԱԲՈՒՐ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ԿՐՑԱԻ ՆՈՒԱՃԵԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԵՄԱՅԱՐԹԱԿԸ...

## ՊԱՅՏԻԿ ՔԱՆԱՅՈՒՄ

Կարելի է անվարան յայտարարել, թե հակառակ զինք շրջապատող ահազանգային քաղաքականություն, Լիբանանի մշակութային կեանքը յաջողապես ինքզինք գերազանցեց այս եղանակին: Ամիսներ առաջ արդեն իսկ տոմսերու վաճառքը սպառած նկատուած համերգը յիրաւի արդարացուց ինքզինք, ապահովելով վեց հազար հանդիսատես որոնք ժամանած էին Լիբանանի զանազան շրջաններէ:

Աշխարհահռչակ ծագումով հայ ֆրանսացի (իր արտայայտութեամբ) երգիչը, երգահանը, բանաստեղծն ու դերասանը, հակառակ այն իրողութեան որ ծնած է Վրաստան-Ախալցխա, իր 91 տարեկան բեղմնաւոր տարիքին, այնքան շքեղորէն պանծացուց Պաթրուսի Միջազգային ֆետիվալի համերգը, որ իր երգի սիրահարները ելեկտրականացած կառչած կը մնային ստեղծուած արուեստախառն մթնոլորտին:

Չուր տեղ չէ որ ֆրանսական «շանսոն»ը բոլոր ժամանակներու ընթացքին մնաց անգերազանցելի, շնորհիւ Շարլ Ազնաւուրի, որ իր նմաններուն եւ իր արուեստին շնորհիւ ֆրանսական երաժշտութիւնը հասցուց դասական արուեստի գագաթնակէտին: 1946-էն մինչեւ այսօր ան համերգներով շրջագայած ու համաշխարհային առաջնակարգ համերգասրահներու մէջ ելոյթ ունենալով հպարտօրէն արտայայտուած է իր հայկական ծագման մասին: Երախտագիտութեան ազնիւ զգացումներով ան բարձրաձայնած է իր հայու ինքնութեան ու իր հայկական արմատներուն՝ ինչպէս, Երզրումի հօր ու իզմիրցի



CHARLES AZNAVOUR  
AUGUST 1

Վոր դաստիարակութեան մասին:

Մտաւորականութիւնը յաճախ արտայայտուած է, եթէ սիրոյ լեզուն ֆրանսերէնն է, ապա աղօթքի լեզուն անպայման հայերէնն է: Իսկ համաշխարհային ճանաչում ունեցող արուեստագէտներ յաճախ արտայայտուած են, թէ «շանսոն»ի մայրենի լեզուն ֆրանսերէնն է, ապա մեր պարագային՝ շանսոնի արքան ՅԱՅ Է:

Ազնաւուրի մեկնաբանութիւններու շտեմարանը հարուստ է իր ստեղծագործած 1000-է աւելի երգերով, որոնց ընդմէջէն գլուխ գործոցներ կարելի է համարել «Լա Պոեմ»ը, «Աւ Երիա», «Մամա», «Իզապէ»ն ու «Երկու Կիթառ» երգերը, որոնք մեծ յափշտակութեամբ ուն-

կընդունեցան Պաթրուսի փառատօնի ընթացքին: Երեկոյթի մթնոլորտէն ներշնչուած ու զգացուած, զիս այնքան աւելի կը յուզէին երբ ականատեսը կ'ըլլայի շուրջ բոլորս գտնուող լիբանանցի (արաբ) ունկնդիրներուն, որոնք խոր ապրումներով կ'ընկերակցէին ՄԵՐ «շանսոնի»ին՝ յատկապէս «Այս Է Վերջը», «Դեռ Երեկ» եւ «Ճահե-լութիւն» երգերու ընթացքին:

1988-ի հայոց մեծ աղետ՝ երկրաշարժէն ետք, Ազնաւուր բազմաթիւ անգամներ այցելեց Յայրենիք ու գտնուեցաւ աղետի գօտիի շրջանները: Իր այցելութիւնը մեծ արձագանգ ունեցաւ թէ՛ հայրենի եւ թէ՛ միջազգային մամուլին մէջ, ընդ որում ան յաջողեցաւ աշխարհին ստիպել, որ իր հայեացքները ուղղէ դէպի Յայաստան: Այնուհետեւ Ֆրանսայի մէջ հիմնադրած «Ազնաւուրը Յայաստանին» բարեգործական հիմնադրամը, որ անսակարկօրէն օգնութեան կը հասներ երկրաշարժէ տուժածներուն:

Արդարեւ, անցնող շաբաթավերջին, լիբանանահայ հանդիսատեսը՝ որ արտորանքով ու մեծ համբերութեամբ կ'ակնկալէր որ Յայոց Յեղասպանութեան 100 ամեակին առիթով մեր ժողովուրդի մեծագոյն «շանսոնի»ն գէթ մեկնաբանէր «Անոնք Ինկան», կամ հպանցիկ ակնարկ մը կատարէր մարդկային պատմութեան մեծագոյն Յեղասպանութեան նկատմամբ, սակայն ներկայ հայ հանդիսատեսը բաւարարուեցաւ սրահէն բաժնուիլ, իր ազգին հպարտութիւնն ու հայու տաղանդին խորհրդանիշը հանդիսացող Ազնաւուրին (Վաղինակ Ազնաւուրեանին), 91 ամեայ երգիչին լիբանանեան բեմահարթակին վրայ ունեցած կեանք մը արժող մեծագոյն յաջողութեան:

## Հալէպի մէջ հայկական կեդրոններ կը շարունակեն ջրամատակարարման ծառայութիւնը



Հալէպի բնակչութիւնը կը շարունակէ ճաշակել աշխարհի ամենէն վտանգաւոր պատերազմներէն մէկը՝ հրասանդերու, կազի շիշերու եւ զանազան տեսակի հրթիռներու արձակումներուն պատճառած ահ ու սարսափի, աւեր ու քանդումի կողքին տարիներէ ի վեր կը դիմագրաւէ նաեւ կենցաղային դժուարութիւններ:

Այս մասին կը յայտնէ Perio news-ը: Արդարեւ, քանի մը շաբաթ է ի վեր Հալէպի մէջ ջուրի հոսքի դադրեցման պատճառով՝ հերթաբար, ջրամատակարարում կը կատարուի քաղաքի զանազան շրջաններու մէջ:

Քաղաքի տարբեր կառոյցներ, ըլլան մզկիթներ կամ որոշ շէնքեր, որոնց կարգին նաեւ հայկական ակումբներ, կեդրոններ եւ եկեղեցիներ, որոնք ջրհորներ եւ ջրամբարներ ունին կը շարունակեն ջուրի մատակարարման ծառայութիւնը կատարել անվճար: Ուստի, բազմաթիւ փողոցներու մէջ կարելի է տեսնել երկար շարքերով ջուր ամբարելու համար իրենց կարգը սպասող ժողովուրդ:

## Կրակ բացուեցաւ ԱՄՆ-ի Իսթիսկիէի Հիւպատոսարանին վրայ

Թուրքիոյ զանազան քաղաքներուն մէջ յարձակումներ կը կատարուին մասնաւորաբար ոստիկաններու ու ոստիկանատուներու վրայ: Բայց Երկուշաբթի 10 Օգոստոս, ժամը 08.30ին յարձակում մըն ալ գործուեցաւ ԱՄՆ-ի Հիւպատոսարանի շէնքին վրայ, որ կը գտնուի Իսթիսկիէի մէջ:

Հաղորդուեցաւ որ երկու հոգի, մէկը կին, միւսը այր, կրակ բացին Հիւպատոսարանին վրայ: Ապահովութեան պաշտօնեաները փոխադարձեցին: Երկու նախադարձակներէն կինը ոտքէն վիրաւոր վիճակով տան մը մէջ ապաստանեցաւ, բայց ձեռքակալուեցաւ ոստիկանութեան կողմէ եւ հիւանդատար կառքով Ամերիկեան հիւանդանոց փոխադրուեցաւ: Միւսը խոյս տուաւ: Ոստիկանութիւնը կը փնտռէ



զայն: Բախումներու հետեւանքով ուրիշ վիրաւոր կամ մեռեալ չկայ: Ռումբի մասնագետները պայթեցուցին նաեւ կասկածելի պայուսակ մը, որ հոն կը գտնուէր: Յայտնի չէ թէ պայուսակին մէջ ռումբ կա՞ր, թէ չկար:

## Սուրիական բանակի հայ զինուոր Յաբէթ Աբիկեան զոհուած է Չապատանիի մէջ

Սուրիական բանակի զինուոր Յաբէթ Մանուկ Աբիկեան զոհուած է Չապատանիի շրջանին մէջ մղուող մարտերուն ընթացքին: Այս մասին տեղեկութիւնը կը փոխանցէ Հալէպի «Գանձասար» պարբերականի Ֆէյսպուրէան էջը:

Նշենք, որ Աբիկեան 1993-ի ծնունդ էր: 2011-ին սկիզբ առած սուրիական պատերազմին հետեւանքով զոհուած հայերուն թիւը անցած է 200-ը:



# ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 24 AOUT 2015

## L'Arménie signe un nouveau contrat avec l'Iran

Moins d'un mois après avoir signé un accord historique sur le nucléaire avec les grandes puissances mondiales, l'Iran s'est engagé à financer un nouveau projet d'énergie en partenariat avec l'Arménie. Ce projet devrait augmenter de manière significative les exportations d'électricité arménienne avec l'Iran.

Les dirigeants de la Banque d'Etat de développement des exportations de l'Iran (EDBI) et d'une société d'énergie arménienne ont signé un accord à Téhéran dimanche. Il prévoit la construction d'une troisième ligne de transmission reliant les deux pays voisins.

«La EDBI fournira 91 000 000 \$ sur les 117 000 000 \$ nécessaires à la construction de la ligne électrique», a annoncé lundi le directeur général de la banque, Ali Salehabadi.

Suite à la page 8

## L'Arménie émet un timbre-poste dédié aux 6<sup>e</sup> Jeux Pan-arméniens



La poste arménienne Haypost a procédé à l'émission d'un timbre-poste, à l'occasion des 6<sup>e</sup> Jeux Pan-arméniens qui se sont déroulés du 3 au 13 août en Arménie. Étaient présents à la présentation, Gagik Tatevossian, vice-ministre des Communications et du Transport, le champion du monde de lutte Vaghinag Galstian, les membres du Comité international des Jeux Pan-arméniens Herminé Douzian (qui représentait la France) et Dikran Altoun, le membre d'honneur Hagop Kirmizian, le directeur de Haypost, Haïg Avakian, ainsi que le président de l'Union des philatélistes d'Arménie Hovig Mousaélian.


Herminé Douzian a affirmé à la presse sa fierté de participer à ces manifestations autour des Jeux Pan-arméniens qui rassemblent des milliers de jeunes Arméniens de la diaspora. Le timbre-poste dédié à ces 6<sup>e</sup> Jeux Pan-arméniens représente la médaille ainsi que le logo de ces jeux. Sont inscrits également les noms des villes d'Érévan, Gumri, Vanatsor et Stepanakert où se déroulent les épreuves ainsi que les images stylisées des six principales disciplines sportives. Le timbre a été émis à 20 000 exemplaires.

## La ministre de la diaspora d'Arménie nommée ambassadrice ?

Traditionnellement, les ambassadeurs d'Arménie travaillant à l'étranger sont invités à revenir au pays en août, des réunions ont lieu, au cours desquelles des instructions et des ordres sont transmis au sujet de leur avenir, a rapporté le quotidien Hraparak.

« Cette année est chaude en termes de diplomatie, et en relation avec les changements. » En outre, l'un des candidats est la ministre de la diaspora, Hranoush Hakobian, qui serait nommée en Biélorussie ou tout autre pays arabe.

« Vahagn Melikian, qui a été nommé sous-ministre de la diaspora, il y a



quelques mois (...), serait nommé ministre de la Diaspora à sa place. »

Vahagn Melikian était ambassadeur en Argentine, durant une courte période.

## L'arrogance et la duplicité de M. Erdogan auront un effet boomerang

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 30 juillet 2015

Le Premier ministre turc Recep Tayyip Erdogan a octroyé la prospérité et la visibilité à son pays. Il a placé la Turquie sur la scène mondiale, et est devenu un acteur important sur la scène internationale.

Mais actuellement, grisé par ses succès nationaux et internationaux, il est pris au jeu de sa réputation et ses réalisations en ouvrant un nouveau front dans le chaos de la politique du Moyen-Orient.

Afin d'atténuer les critiques de ses alliés et de faciliter l'admission de la Turquie dans l'Union européenne, il s'est engagé dans un processus de paix avec la minorité kurde. Il a même pris l'initiative sans précédent de négocier avec le leader kurde emprisonné Abdullah Ocalan. Estimant que l'initiative de M. Erdogan était sincère, le Parlement européen, a considéré retirer le PKK kurde de la liste des organisations terroristes. Mais Ankara s'y est farouchement opposé.

Le Parti des travailleurs du Kurdistan (PKK) est un véritable mouvement de libération nationale représentant les aspirations du peuple kurde. Mais si de tels mouvements vont à l'encontre des intérêts de nations puissantes, les gouvernements ont les moyens de diaboliser ces mouvements. Bien sûr, les médias conciliants rattrapent leur retard et poursuivent cette diabolisation.

Le stratagème de M. Erdogan était d'émousser la critique de ses alliés et de procéder à un réalignement politique du pays. Au cours des dernières élections législatives, il a permis aux partis kurdes de se présenter, tout en maintenant l'espoir qu'ils n'atteignent pas le minimum requis de 10 pour cent, et ainsi pouvoir sauver la face, et en sortir victorieux. Contrairement à ses intentions et ses machinations, le parti kurde, le Parti démocratique du peuple (HDP), a recueilli 12 pour cent des votes, et son parti AKP a subi un revers.

À la suite des élections, la Turquie avait 45 jours pour former un nouveau cabinet, grâce à la formation d'une coalition. Le parti de M. Erdogan s'est traîné les pieds afin de précipiter des élections anticipées, qui peuvent maintenant avoir lieu en novembre. Dans l'intervalle, le Premier ministre Ahmet Davutoglu a appelé les trois principaux partis politiques à se réunir et à isoler le parti kurde. De plus, le Parti du Mouvement Nationaliste (MHP) de droite, a lancé un appel au procureur général afin d'interdire la participation du HDP aux prochaines élections.

Alors que M. Erdogan projetait ses machinations politiques internes, il avait besoin d'actions simultanées en politique étrangère afin de justifier sa volte-face sur le problème kurde.

Ce n'est un secret pour personne que la Turquie a servi à la formation et

à l'armement des forces de l'État islamique (EI) qui a instauré le chaos en Syrie et en Irak. En outre, les caisses de l'EI reçoivent des milliards de dollars grâce à la commercialisation illégale de leur pétrole par la Turquie. Les partenaires américains et l'OTAN ont continué à détourner la tête et à cajoler le gouvernement Erdogan pour qu'il se joigne aux forces de la coalition contre l'EI. La Turquie a non seulement fait la sourde oreille mais a poursuivi son action à contre courant. Erdogan a même eu le culot d'interdire aux forces américaines d'utiliser la base aérienne d'Incirlik pour faciliter les raids aériens sur les territoires occupés et les objectifs militaires. Il a finalement cédé et a permis l'utilisation de la base aérienne après que ses conditions aient été exaucées.

Les alliés de l'OTAN se sont accommodés de cette arrogance, qui a causé l'échec de leurs opérations en Irak et en Syrie.

Erdogan a pu prévoir le futur dans toute cette agitation. Un Kurdistan autonome consolidé en Irak, avec la bénédiction des Etats-Unis et d'Israël.

Dans un premier temps, M. Erdogan a flirté avec les dirigeants de la région autonome kurde. Davutoglu a même rendu deux visites clandestines à Erbil, sans l'autorisation du gouvernement central de Bagdad. La Turquie a également offert de lucratives affaires aux Kurdes d'Irak, pour autant qu'ils se tiennent à l'écart de leurs cousins de Turquie.

Puis un autre constat a émergé; les forces kurdes de Kobani, en Syrie, se sont avérées être la force de dissuasion la plus efficace contre l'EI. Par conséquent, l'alliance occidentale a capitalisé sur les Kurdes dans le but de contenir l'avance de l'EI. Erdogan a réalisé que la base kurde d'Irak, stimulée par l'enclave de Kobani en Syrie, aurait un inexorable effet d'entraînement sur la minorité kurde de Turquie.

Pendant ce temps, Erdogan faisait pression sur les alliés de l'OTAN afin de créer une zone tampon en Syrie, faisant fi de la souveraineté de cette dernière. Afin d'atteindre son objectif, il a dû répondre, du bout des lèvres, aux demandes de la coalition, et se joindre à la lutte contre l'EI.

Pour l'Occident, il s'agissait de sauver la face en prétendant que la Turquie avait finalement acquiescé à ses demandes, alors que pour la Turquie, il s'agissait du droit d'affaiblir les aspirations kurdes en Syrie en bombardant simultanément l'EI et des cibles du PKK en Syrie et en Irak.

Washington et Londres ont hypocritement justifiés deux raids turcs, déclarant que « la Turquie a le droit de se défendre. » Mais le message émanant du champ de bataille est totalement différent. Les forces régulières irakiennes, formées et armées par les Etats-Unis, se sont effondrées devant l'EI. La seule force efficace sur le terrain a été fournie par les peshmergas kurdes, utilisés pour lutter dans des conditions brutales.

Suite à la page 8

## Nareg Hakhnazarian honore les victimes du génocide

Le 9 juillet 2015, Nareg Hakhnazarian qui a reçu une médaille d'or au XIVe Concours International Tchaïkovski 2011, le plus prestigieux prix remis à un violoncelliste, a joué les « Variations Rococo » de Tchaïkovski, une composition de violoncelle complexe, accompagné de l'Orchestre philharmonique de Los Angeles sous la direction de Lionel Bringuier, au Hollywood Bowl.

Hakhnazarian a annoncé que cette année marquait le centenaire du génocide arménien, et que Los Angeles avait une grande communauté arménienne.

Pour commémorer l'évènement, il a joué les « Lamentations », une suite composée par Coleridge-Taylor Perkinson basé sur une chanson folklorique pour violoncelle solo, exprimant le cri d'un peuple.

« Hakhnazarian a projeté l'intensité dès être monté sur scène. Jusqu'à la toute fin, il a montré son intense



concentration et un art exceptionnel, » a écrit le New York Times.

« Un violoncelliste phénoménal. Il produit un son puissant et coloré dans tous les registres, à chaque grand changement et joue de toutes les astuces de virtuose avec une facilité insolente. Il devrait avoir une brillante carrière, » a écrit le Washington Post.

## L'Arménie signe un nouveau...

Suite de la page 7



Celui a ajouté que le gouvernement arménien fournira le reste du financement. Les travaux d'installation débuteront plus tard dans l'année et dureront 18 mois. Le gouvernement arménien n'a fait aucune déclaration officielle annonçant la signature de l'accord.

L'Arménie exporte déjà des quantités limitées d'électricité à l'Iran à travers des lignes de transport qui relient les réseaux électriques des deux pays. Cette électricité est largement générée par le gaz naturel iranien fourni aux centrales thermiques arméniennes.

Le ministre de l'Energie et des Ressources naturelles, Yervand Zakharian, a signifié l'année dernière qu'une troisième ligne, plus puissante, permettra de multiplier par cinq les exportations de produits énergétiques arméniens. En conséquence, les livraisons de gaz iranien à la nation du Caucase du Sud devraient également augmenter rapidement.

L'Arménie importe actuellement environ 500 millions de mètres cubes de gaz par an en provenance d'Iran, comparativement à environ 2 milliards de mètres cubes importés de Russie. Salehabadi a déclaré que le projet d'énergie ne renforcera pas seulement les liens énergétiques arméno-iraniens, mais aussi permettra à l'Iran de se connecter au réseau électrique de la Géorgie. «La Géorgie pourra profiter de cette ligne de transport d'électricité», a-t-il dit.

Les gouvernements arménien et iranien avaient conclu des accords préliminaires sur ce sujet et d'autres projets énergétiques communs il y a près de dix ans. Ils ont à plusieurs reprises retardé leur mise en œuvre en raison des sanctions internationales qui ont été imposées à l'Iran sur son programme nucléaire controversé. En particulier, le gouvernement arménien a dû imposer des restrictions importantes sur les opérations de trésorerie entre banques arméniennes et iraniennes. Les sanctions vont être levées progressivement dans les prochains mois, en vertu de l'accord nucléaire qui a été signé par l'Iran, les Etats-Unis et cinq autres puissances mondiales le 14 juillet dernier.

Plus tard en juillet, une délégation iranienne dirigée par Salehabadi s'était rendue à Erevan pour des entretiens avec le Premier ministre Hovik Abrahamian, le ministre de l'Energie Zakharian et d'autres responsables arméniens. Des sources arméniennes officielles avaient alors indiqué que le projet de construction de la ligne de transmission avait été à l'ordre du jour des pourparlers.

Le 1er août, Abrahamian a examiné la question dans une conversation téléphonique avec le premier vice-président iranien, Eshaq Jahangiri. «Un accord a été trouvé sur le démarrage de la construction de la troisième ligne de transmission entre l'Iran et l'Arménie», avait déclaré son service de presse dans un communiqué.

## Le Festival de Sarajevo honore Atom Egoyan

Le Festival du film de Sarajevo, qui se tiendra du 14 au 22 août, rendra hommage au réalisateur Atom Egoyan, qui recevra le Cœur d'honneur de Sarajevo pour sa contribution au cinéma. Le festival projettera trois de ses films: « Exotica » (1994), tourné dans et autour d'un club de strip-tease, « De beaux lendemains » primé au festival de Cannes (1997), et « Ararat » (2002), un drame sur le génocide arménien.

Egoyan est né de parents arméniens en Egypte, et sa famille a déménagé au Canada alors qu'il avait 2 ans. Il a réalisé plus d'une douzaine de films, plusieurs projets de télévision ainsi que des courts-métrages. Son dernier long métrage, « Rappelez-vous », mettant en scène Christopher Plummer, sera projeté à Venise et à Toronto en septembre prochain.



## Un historien grec publie un livre consacré au génocide arménien



Dans son dernier livre « L'Arménie, les Arméniens, une justification, » l'historien grec Teofanis Malkidis parle des génocides arménien, grec, kurde et assyrien perpétré il y a 100 ans dans l'Empire ottoman et a souligné que, même aujourd'hui, la Turquie n'a pas modifié son style et ses principes, et continue à perpétrer un génocide contre les minorités ethniques de Turquie.

Selon Armenpress, le livre a été publié par le Comité du Centenaire du génocide arménien de Grèce et présente des photos, des incidents, des documents et des témoignages. « Avec le temps, je me suis rendu compte de combien j'étais reconnaissant envers les Arméniens. C'est grâce à eux que le monde parle de plus en plus de la prévention des génocides aujourd'hui. Ils ont apporté une grande contribution à l'évolution de la conscience des dirigeants mondiaux et menaient une lutte sincère contre les génocides, » a déclaré l'historien, ajoutant que même 100 ans plus, la Turquie a toujours les mêmes principes et le même style de travail.

« La Turquie refuse non seulement de reconnaître les crimes commis contre l'humanité il y a un siècle, mais continue également sa politique génocidaire. Le résultat est l'assassinat de Hrant Dink, ce qui est arrivé aux Kurdes, et les massacres en Syrie, » a écrit l'auteur.

## L'arrogance et la...

Suite de la page 7

En permettant à la Turquie de bombardier les forces kurdes, l'Occident a contribué à paralyser son propre combat contre les forces de l'EI.

Les dirigeants kurdes ont annoncé que M. Erdogan jouait avec le feu. Le bombardement de Suruc, qui a déclenché la mobilisation des forces armées turques, est attribué par les autorités d'Ankara à l'EI. Cela peut aussi être une tentative des Kurdes, qu'Ankara refuse de reconnaître comme un geste de vengeance kurde, pour minimiser sa vulnérabilité au regard du potentiel kurde.

Erdogan a déjà réveillé un nid de frelons. Il a forcé les Kurdes d'Irak à

s'aligner à Kobani et à l'intérieur de la Turquie. Le PKK a annoncé que son cessez-le-feu unilatéral avait expiré.

Certains observateurs internationaux ont déjà commencé à appeler ce nouvel assaut comme le début du « second effondrement de l'Empire ottoman. »

Au cours de leur insurrection de 30 ans, les Kurdes ont perdu 40 000 victimes. Aujourd'hui, ils ont la main haute en Turquie, militairement et politiquement, et le potentiel d'une insurrection kurde dans toute la Turquie est une réelle menace.

Cela dépend de comment l'Occident désirera combattre l'arrogance et la duplicité de M. Erdogan, qui tôt ou tard aura un effet boomerang.

Traduction N.P.



# ABAKA

ENGLISH SECTION

MONDAY AUGUST 24, 2015

## EVOLUTION FROM BELOW: LESSONS FROM #ELECTRIC YEREVAN

RAFFI ELLIOTT

Almost a month has passed since the protests which rocked the tiny south-Caucasian country of Armenia; making world headlines as #ElectricYerevan reached their apex. In a mere two weeks of massive round-the-clock demonstrations, which permanently blocked the city's main thoroughfare, Baghramyan street, as well as paralyzing many other busy streets over a planned 21% electricity price hike, the demonstrators have brought about more concessions from the Armenian government than ever before. Little had they known at the time, but they were in the midst of forming a competing narrative for Socio-political change in the post-soviet space.

Of their two initial demands: halting the electricity price hike, and investigating claims of police brutality on the first night of protests; both have been satisfied to a certain degree. The government announced that it would not pass-on the extra fees to consumers, and promptly launched an investigation on the aforementioned police violence.

The demonstrators also achieved a number of concessions that they initially weren't even demanding: among other things, the Russian government, which had been indirectly accused of pushing for the price hike, has agreed to allow Valery Permyakov, the Russian private accused of brutally murdering a family of 7 in Armenia's city of Gyumri, to be tried by an Armenian, rather than Russian military Court. Furthermore, "Yerevan Jur" LLC, the country's water distributing company, cancelled a similar price hike. The Government also called for an audit behind the price-hike decision, and began legal proceedings against "Electric Networks of Armenia", while its entire board was fired. The speed at which such concessions were being made lead many amongst the public to start betting of what announcements would be made next.

Most members of the public were certainly not duped by these seeming government compromises. The State has a record of making concessions and expecting concerned citizens to lose interest in the follow up. In this way, countless commissions on corruption have never turned up evidence, controversies involving government-connected Oligarchs have usually been solved with the culprit being quietly reshuffled in other posts (as was the case with former MP, Ruben

Hayrapetyan, former Mayor-turned-Transport Minister Gagik Beglaryan and Governor Suren Khatchatryan), and so on. Most are aware that the government's promise to subsidize the price hoist will mean that it would be taken out of their taxes, and that the audit will not reveal much, because it is the implementation that matters.

Citizens can overlook these issues, because they know that regardless of the result, it is clear that

#ElectricYerevan is a game changer. The tipping point happened on a Friday, when the protest saw its biggest numbers ever, with up to 30 000 people blocking the streets in several cities. The protesters; mostly young urban professionals, were joined by government employees, politicians and other civil servants, who up until that point, had shied away from open protest for fear of losing their jobs, or government repression against their families if identified. The Myth of government invulnerability was now on the chopping board. The children of a generation which had been taught to fear the reach of the Omnipotent State were now in open rebellion against it. On that day, the protesters, and the government alike knew that the paper tiger had been deflated.

Until #ElectricYerevan, the dominant view on social change in the Former Soviet Space had been that countries would either drift towards autocracy, like Azerbaijan, Belarus, Kazakhstan, Uzbekistan and Russia had done, or rapid democratization and pro-Western rapprochement, (at the cost of stability) through Colour Revolutions, as the Georgian, Ukrainian and Moldovan models had suggested.

Armenia, on the other hand, which had long been known to balance Eastern and Western obligations (Complementary policy) with slow, but steady democratic advances, has just pioneered a new narrative on post-soviet social change: that of grassroots forced evolution (as opposed to revolution).

This certainly isn't the first time Armenia has felt unrest. Since the massive pro-Independence rallies which helped unravel the dying Soviet Union, most Armenian protest actions have followed a regular pattern every five years: failed star-presidential candidates would mass downtrodden, often older supporters around them, accuse the ruling regime of corruption, only for their movements to eventually fizzle out, or be dispersed by the police. The more radical elements have long

Cont'd on page 10

## Valérie Boyer: History Must Not Recur After 1915

History must not recur after 1915, Valérie Boyer, MP of the National Assembly of France wrote in her blog, which reads as follows:

"At my request, the message in support of the Eastern Christians was placed on the façade of the 11-12 arrondissements of Marseille, near the poster commemorating the Armenian Genocide.

I was the first MP to direct the issue on the Eastern Christians to the government as early as one year ago, on 23 July 2014, using the word "genocide." And in September 2014, I organized an evening in support of the Eastern Christians.

Let us not allow the history to recur after one hundred years. Almost all the Christians have left the region during nearly two years in order to avoid repercussions.

The Christian minority is struggling, and their struggle is the universal struggle against oppression; it's the struggle of our civilization.

It's high time to put an end to the universal ignorance!

I won't keep silent, and won't remain as a witness of the recurring history."




## Russian president to Turkish ambassador: "tell your dictator President he can go to hell along with his ISIS terrorists, I will make Syria a 'Big Stalingrad' for him!"

**The Moscow Times**— The Russian president Vladimir Putin broke the accepted diplomatic protocols and has personally summoned the Turkish ambassador to Moscow, Mr Ümit Yardim, and warned him that the Russian Federation shall sever the diplomatic relations immediately unless the Turkish president Recep Tayyip Erdogan stops supporting ISIS rebels in Syria, where Russia holds its last navy base in the Mediterranean sea.

The Russian president purportedly went into a long diatribe criticizing the Turkish foreign policy and its malevolent role in Syria, Iraq and Yemen by supporting Saudi-backed al-Qaeda terrorists, reported the Moscow Times, which escalated the conversation with the Turkish ambassador to a fierce polemic.

According to the leaked information obtained by The Moscow Times, the meeting between the Mr. Putin and Turkish ambassador was imbued with intense mutual resentment where Mr. Yardim has repudiated all Russian accusations, laying blame on Russia for Syria's bitter and protracted civil war. "...then tell your dictator president he can go to hell along with his ISIS terrorists and I shall make Syria to nothing but a 'Big Stalingrad', for Erdogan and his Saudi allies are no



less vicious than Adolf Hitler," replied Vladimir Putin in the 2-hour closed door meeting with the Turkish emissary.

"How hypocritic is your president as he advocates democracy and lambasts the military coup d'état in Egypt" added Mr. Putin, and continued by saying that his country won't abandon the Syrian legitimate administration and will cooperate with its allies, namely Iran and China, to find a political solution to Syria's interminable civil war which deteriorated the 23-million Arab nation to an utter ethnic and religious anarchy.

## German analyst: Iran may choose Armenia and Georgia as a gas transit route

Iran can transport its energy resources via Armenia and Georgia to Russia, but the agreement with the Georgian government is needed, German analyst Alexander Rahr told [Armenian News-NEWS.am](http://ArmenianNews-NEWS.am).

Speaking about Armenia's chances to become a transit route for transportation of the Iranian oil and gas to Europe, the analyst said it is difficult to imagine, since Armenia and Iran will have to reach an agreement with Georgia or Turkey.

Cont'd on page 10

## Constitutional Referendum in Armenia in late November

**YEREVAN (RFE/RL)** — A popular referendum on proposed constitutional amendments may be held as early as the end of November, according to a member of the commission of the draft of Armenia's new constitution.

The Constitutional Reform Commission (CRC) has released all 15 chapters of the new constitution. The CRC is also expected to publish transitional provisions soon. The full draft will be sent to the Venice Commission, an advisory body of the Council of Europe, for review. Earlier, the Commission refused to follow the recommendations of the Venice Commission to remove a controversial provision on the so-called "second round" of parliamentary elections from the draft constitutional amendments. The International experts had also raised concerns about the proposed order of forming the judiciary that they said could undermine the independence of the judicial branch of government. Quite a few changes in the final draft had been made after proposals submitted by different organizations and individuals were received by the Commission, as well as based on critical views of the media.

The constitutional amendments proposed by the CRC essentially turn Armenia into a parliamentary republic with a largely ceremonial president.



### German analyst: Iran may...

Cont'd from page 9

"But, as we know, Turkey's main partner is Azerbaijan, not Armenia," he emphasized.

The analyst noted that Iran has a border with Turkey, but construction of a pipeline in this region becomes more and more dangerous, given the terrorist attacks of the Islamic State on the border between Syria and Turkey.

"Therefore, Iran in fact can have a route via Armenia and Georgia to Russia, but they need to arrange it with the Georgian government. The Georgian authorities are not anti-Russian Saakashvili, but until the conflict over Abkhazia and South Ossetia is unresolved, the Russian side will hardly be capable to reach an agreement with the Georgian leadership," he added.

At the end of the day Iran is not in a geopolitical isolation, as it seems to be, and Tehran can easily choose other way and transport gas to China via Turkmenistan or agree with Pakistan on entering the Indian Ocean, the analyst resumed.

### Evolution...

Cont'd from page 9

since been convinced that bloodshed would be the only instigator of change.

Keen observers would notice that these protesters, often, a-political, young, and professional, differ greatly from the previous generation due to their inclusiveness, and their generally altruistic objectives. "No to Graft" and "Stop Corruption" were amongst the most popular slogans used by the #ElectricYerevan protesters. They called for restraint, and respect for the constitution amongst their supporters, and cleaned up after themselves. Calls for 'revolution' were noticeably absent. Their aims are clear: transparent and responsible government, social inclusiveness and real democratic reform. These calls for political change, in turn, are mirrored by a revival of civil society, artistic expression, openness to the world, and assertive national identity.

Many of them are veterans of previous social actions, such as the successful defense of the Mashtots Park, in 2012 (amongst Yerevan's only remaining green space), the successful protest against the Transport price

hike in 2013, the cancellation of pension reforms (which would have disproportionately affected younger IT professionals) in 2014. Many of them were amongst the disillusioned supporters of failed presidential candidate Raffi Hovhannisyan in 2013.

It is within the context of this greater wave of civic activism, and blossoming social scene, that the #ElectricYerevan movement needs to be understood. It is but a stepping stone in a larger drive for national independence, political assertiveness, and a free society.

The activists have finally understood that there is no hurry. They know that the government-connected businessmen are a dying breed; symbols of a bygone era. With few government assets left to expropriate, they are beginning to turn on each other. The activists, meanwhile, take each protest action as a learning experience. Each one is better organized, more sustained, and with more concise aims than the last. It is now understood by everyone that Armenia's people can make its voice heard if need be. It is now just a matter of when the government will make its next *faux-pas*. Everyone's eyes are now on the parliamentary elections of 2017.

## THE YOUTH CORNER

### *That got me thinking*

#### Say hello to Voldetort

A couple of weeks ago, I found out somebody had called their pet tortoise Voldetort, thus creating a funny pun using the Dark Lord's name; which in turn gave me the idea of naming pets after characters from famous novels. So, though this article would be a little less serious than usual, I thought up of some names for pets.

For a cat: d'Artagnan. Indeed, d'Artagnan is one of the characters in Alexandre Dumas' *The Three Musketeers*. In fact, the name interested me so much I did a quick research about him and found out that the real Comte d'Artagnan was a spy for Louis XIV's court before the Musketeers of the Guard were created. I think it would be very fitting for a cat, because cats are agile, have quick reflexes, and are very proud, much like the musketeers themselves. Your cat can be named after a cool spy who dresses well.

For a dog: Nick. Nick Carraway is the narrator of F. Scott Fitzgerald's *The Great Gatsby*. Nick had a heart of gold and wanted with all his heart to believe in Jay Gatsby's good nature. He was loyal to a fault, and even arranged a meeting between Jay and Daisy, per Jay's request. Everyone always wanted him around and spoke highly of him. And let's be honest, dogs deserve to be named after a kind character such as Nick. You could even call him "old sport".

For a bunny: Gavroche. It might be an odd-sounding name but do you remember the adorable little boy in *Les Misérables*? In the book, he takes care of two little boys, without even knowing that they are his little brothers. He then volunteers to help the revolutionaries, which ultimately leads to his death. Honestly, that upset me even more than Jean Valjean's death. Nonetheless, I think that little bunnies are a bit like Gavroche: they are cute, bring joy in everyone's lives and are not much of a hindrance.

For a goldfish: Joey Tribbiani. Now, this last one is far from being a literary figure, but naming a goldfish after the character from *F.R.I.E.N.D.S.* is pretty hilarious. Joey is often forgetful, has his head in the clouds, and spends his day sitting around and eating, just like a goldfish. However, as the word goldfish indicates, Joey is a golden friend that you keep close to your heart even if he doesn't do much. All you need to do is feed him and he's happy.

Sananne Wartabetian

## AJF Launches Scholarship Program for Syrian Armenian Expatriates in Canada

**Geneva, August 4, 2015** — The Armenian Jewellers Foundation (AJF) in collaboration with the Birks Family Foundation has announced the launch of its new educational program in Canada to benefit the newly formed Syrian-Armenian expatriates' community.

Thousands of Armenians fleeing war and destruction in Syria have sought refuge in Armenia and elsewhere including many families who chose Canada as their new home. Canada is leading in the resettlement of Syrian refugees in general. Montreal has welcomed over 1000 Syrian refugees of Armenian origin, and with more on the way, the number is expected to surpass 2000 in 2015.

AJF will support 10 applicants enrolled in the Gemology 1 fall session course at the École de gemmologie de Montréal (EGM), one of the prime jewellery sector academies in North America. The study curriculum covers key aspects of gemological science, including diamonds. Graduates are expected to gain a solid knowledge in gemology, which may be used to pursue further studies or embark on a new career in the jewellery sector.

Applicants must be recent Syrian-Armenian expatriates who are living in Canada as permanent residents. A recommendation letter is required along with a signed application. Selected candidates will be automatically enrolled in the EGM. An information session will be held for applicants the week of August 31 (TBA).

Completed applications must be received by September 3, 2015. Forms may be requested in writing from AJF. Teaching and course materials are in English or French, therefore, basic knowledge of either language is a key requirement.

"We are proud of our 10 bright scholarship graduates from diverse communities who successfully completed their Diamond Grading diploma program at the Armenian Gemological Laboratory and Academy in Yerevan. We are confident that this Canadian initiative will help facilitate our displaced Syrian compatriots' integration into their new environment. We extend our gratitude to all our patrons, especially, to the Birks Family Foundation for its support of this initiative," said AJF Board of Trustees Chairman Mr. Pierre Akkelian.

The Armenian Jewellers Foundation was established in 2013 to advance the heritage of Armenians in jewellery. AJF's mission is to undertake historical research, document present-day success-stories and ensure the transfer of knowledge to the new generation. The scholarship program promotes new capacity in the jewellery and diamond manufacturing sector both in Armenia and the Diaspora. This current effort is carried out in collaboration with Canadian Armenian community organizations.

# Թողարկուած Է Համահայկական ամառնային 6-րդ խաղերուն նուիրուած նամականիշը

«Հայփոստ» ՓԲԸ-ն պաշտօնապէս մարած եւ շրջանառութեան մէջ դրած է Համահայկական ամառնային 6-րդ խաղերը խորհրդանշող նոր փոստային թողարկում՝ գեղաթերթիկ մէկ նամականիշով:

Գեղաթերթիկի մարման մասնակցած են ՀՀ կապի եւ փոխադրամիջոցի փոխնախարար Գագիկ Թադեւոսեանը, ըմբշմարտի աշխարհի ախոյեան Վաղինակ Գալստեանը, Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի գործկոմի անդամներ Տիգրան Ալթունը, Հերմինէ Տուգեանը եւ Յակոբ Կիւմիզեանը, խաղերու կազմակերպիչ կոմիտէի անդամ Յարութիւն Եաւրեանը, «Հայփոստ» ՓԲԸ գլխաւոր գործադիր տնօրէն Հայկ Աւագեանը, ՀՀ ֆիլատելիստներու միութեան նախագահ Յովիկ Մուսայեանը:

Կապի եւ փոխադրամիջոցի փոխնախարար Գագիկ Թադեւոսեանի խօսքով՝ բարի ասանդոյթ դարձած է բոլոր յատկանշական ձեռնարկներուն նուիրուած գեղաթերթիկ, նամականիշ կամ ծրար ունենալը: «Համահայկական ամառնային 6-րդ խաղերն այնքան նշանակալից են մեր ազգի համար, որ նախարարութեան նամականիշների խորհուրդն ու «Հայփոստ» ընկերութիւնը որոշեցին ստեղծել թէ՛ ծրար, թէ՛ գեղաթերթիկ, թէ՛ նամականիշ: Յատկանշական է, որ միջոցառ-



մանը մասնակցեցին Համահայկական խաղերի գործադիր խորհրդի անդամներ, հայ նշանաւոր մարզիկներ, Ֆիլատելիստների միութեան նախագահը, «հայփոստէ ընկերութեան տնօրէնը», - ըսած է Գագիկ Թադեւոսեանը: Փոխնախարարի տեղեկութիւններով՝ նամականիշը մեծ տպաքանակով ամբողջ աշխարհով սպառման դրուած է: «Սա գնում է համալրելու համաշխարհային ֆիլատերիայի նմուշները: Կարծում եմ՝ Համահայկական ամառնային խաղերին նուիրուած նամականիշն իր ուրոյն տեղը կը զբաղեցնի համաշխարհային նամականիշների շարքում», - ակեցուցած

է փոխնախարարը:

Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի անդամ Հերմինէ Տուգեանը, որ կը ներկայացնէ Ֆրանսան, հպարտ է նման ձեռնարկի մասնակցելու համար: Անոր կարծիքով՝ նամականիշի միջոցով կը հանրահռչակուին թէ՛ Համահայկական խաղերը, թէ՛ Հայաստանը ինքնին:

Համահայկական ամառնային 6-րդ խաղերուն նուիրուած գեղաթերթիկի վրայ պատկերուած է խաղերու ոսկէ մետալի դիմերեսը եւ դարձերեսը, ոճաւորուած պատկերուած են խաղերու տիպը եւ բաժակը, ինչպէս նաեւ նշուած են այն քաղաք-

ները, ուր պիտի իրականացուին խաղերը՝ Երեւան, Գիւմրի, Վանաձոր, Ստեփանակերտ: Նամականիշի վրայ պատկերուած է մարզադաշտ՝ վեց հիմնական մարզաձեւերով, ինչպէս նաեւ Համահայկական խաղերու տիպը:

Համահայկական ամառնային 6-րդ խաղերուն նուիրուած մէկ նամականիշով գեղաթերթիկի ձեւաւորումը իրականացուցած է Դաւիթ Տովլաթեանը: Տպաքանակը 20 հազար օրինակ է, նամականիշի չափերն են՝ 28/45 մմ, գեղաթերթիկի չափերը՝ 52/77 մմ:

## Հայոց Յեղասպանութիւնը իբրեւ տեղահանութիւն ներկայացնող առաջին ժապաւենը թողարկուած է Թուրքիոյ մէջ



Թուրքիոյ մէջ պատրաստուած է 1915-ի ողբերգութեան նիւթով առաջին երկար ժապաւենը՝ «Կորուսեալ Թռչունները», որ Հայոց Յեղասպանութիւնը կը ներկայացնէ իբրեւ տեղահանութիւն: Բեմադրիչներ Արէն Պերտեմիսի եւ Էլա Ալեմաչի հեղինակած եւ Թուրքիոյ մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ պատրաստուած ժապաւենին ծանուցումը մեծ հետաքրքրութիւն ստեղծած է եւ անիկա արդէն ցուցադրուած է 113 երկիրներու մէջ:

Ըստ Ermenihaber.am-ի՝ ժապաւենին անդրադարձած թրքական «Ռատիֆալ» պարբերականը կը գրէ. «Kara Kedi Film» («Քարա Զետի ֆիլմ») ընկերութեան պատրաստուած «Կորուսեալ Թռչունները» յատկանշական է մէկ գիշերուան մէջ իրենց ամբողջ ընտանիքը կորսնցուցած քրոջ ու եղբոր՝ Մարիամի եւ Պետոյի ընտանիքին որոնումները նկարագրող թախծալից պատմութեամբ, որ իր մէջ կ'ամփոփէ հազարաւոր հայ երեխաներուն ճակատագիրը»:

Գլխաւոր դերերը ստանձնած են Տիլա Ուլուճան եւ Հերոս Ագոպեան, որոնք այս դերերուն համար ընտրուած են Թուրքիա բնակող եւ դերին համար թեկնածու հանդիսացող շուրջ 502 մանուկներէն:

«Տպաւորիչ տեսարաններով, տաղանդաւոր դերասաններով, մեծ պիւտճեով, պատմական իրականութեան համապատասխանող ստեղծագործական երեւակայութեամբ եւ բանաստեղծական երաժշտութեամբ ուշադրութիւն գրաւող «Կորուսեալ Թռչուններ»-ու ցուցադրութիւնը Թուրքիոյ մէջ պիտի կայանայ Հոկտեմբերի աւարտին կամ Նոյեմբերի սկիզբը», գրած է «Ռատիֆալ»:

## «Միսս Համահայկական ամառնային 6-րդ խաղեր»-ու գեղեցկուհին վիրահայ է



Օգոստոս 11-ին տեղի ունեցած է «Միսս Համահայկական ամառնային 6-րդ խաղեր» գեղեցկութեան մրցոյթը, որուն մասնակցած են աշխարհի տարբեր քաղաքներէ հայրենիք ժամանած շուրջ երկու տասնեակ գեղեցկուհիներ: Այս մասին կը յայտնէ համահայկական խաղերու մամլոյ ծառայութիւնը:

Աւանդաբար իրականացուող գեղեցկութեան մրցոյթի մասնակիցները հանդիսատեսին եւ ժիւրիի անդամներուն ներկայացած են երեկոյեան զգեստներով եւ պատասխանած տրուած հարցերուն:

Ելոյթներէն յետոյ ժիւրիի անդամները գնահատած են մասնակիցներու արտաքին տուեալները, իրենց հարցերուն վերջիններուս հնչեցուցած պատասխանները: Որոշ ժամանակ անց ամփոփելով գնահատականները՝ ժիւրիին յայտարարած է առաջին երեք հորիզոնականները զբաղեցուցած գեղեցկուհիներու անունները:

«Միսս Համահայկական ամառնային 6-րդ խաղեր» տիտղոսին արժանացած է Թիֆլիսի ներկայացնող Տիանա Տումանովան՝ 116 միաւորով: 1 միաւոր պակաս ստացած է Ալեքսանտրիան ներկայացնող Մերի Յարութիւնեան: Երրորդ հորիզոնականը զբաղեցուցած է Լոս Անճելըսէն ժամանած Լիլիթ Արուսիին՝ 112 միաւորով:

# Արեւմտահայերէնի փրկութեան բանալին «Արեւելեան» Յայաստանի մէջ է

Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ, Երեւանի մէջ, Յուլիս 29-30 իրականացուեցաւ «Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ» համաժողովը, որուն աջակցած է ՀՀ ԳԱՄ Հ. Աճառեանի անուան լեզուի ուսումնարանը:

Համաժողովին առաջարկուած է երեք յանձնախումբ ստեղծել, որոնք կը զբաղին արեւմտահայերէնի պահպանութեան, լեզուի երկու ճիւղերու մերձեցման ուղիներու որոնմամբ եւ միասնական ուղղագրութեան անցնելու հարցերով: Յանձնախումբերու մէջ կ'ընդգրկուին հայաստանեան եւ Սփիւռքի մտաւորականներ: Այդ յանձնախումբերու ստացած արդիւնքները պիտի ամփոփուին եւ քննարկուին առնուազն 6 ամիսը անգամ մը:

Համաժողովի արդիւնքներու եւ հայոց լեզուի շուրջ առկայ խնդիրներու վերաբերեալ «Մետիամաքս»ը գրուցած է Լեզուի ուսումնարարի տնօրէն Վիթթոր Կատուալեանի հետ:

## ԱՐԵՎՍԱԳԱՅԵՐԵՆԻ ՊԱՅՊԱՆՈՒԹԻՒՆ

Արդէն 100 տարի է, որ արեւմտահայերէնը իր բնականոն զարգացման հնարաւորութիւնը չունի: Յեղասպանութեան հետեւանքով հայերէնի այս ճիւղը օգտագործողները, անոնց շարքին նաեւ գրողները, սպաննուեցան կամ հայրենագործ դարձան՝ իրենց հետ տանելով արեւմտահայերէնը: Լեզուի այս ճիւղը սկսաւ կիրառուիլ Սփիւռքի մէջ, որ մէկ միասնական տարածք չէ, որուն հետեւանքով արեւմտահայերէնը ծուէն-ծուէն եղած կը գործածուի, չի կրնար միասնական զարգացում ունենալ:

Նոր պայմանները կը թելադրեն, որ Սփիւռքի մէջ ապրող հայ երիտասարդները աւելի շատ մղուին օտար լեզուով կրթութեան եւ շփման: Արեւմտահայերէնը դարձած է երկրորդական խնդիր, ուստի անոր պահպանումը երթալով հրատապ կը դառնայ:

Եւ ի՞նչ է, տեղի կազմակերպութիւններն ու նախարարութիւնը տարբեր ծրագիրներ կիրականացնեն, բայց այդ ամէնը չեն կրնար դիմագրաւել նահանջին:

Համաժողովի բոլոր մասնակիցները համակարծիք էին, որ արեւմտահայերէնի պահպանութեան միակ ուղին Յայաստանի մէջ գործածութեան եւ տարածման հնարաւորութիւններ ստեղծելն է:

Հայաստանի Հանրապետութեան մէջ պետական լեզուն հայերէնն է, որը միայն գրական արեւելահայերէնը չէ: Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի, բարբառներու ամբողջութիւնն է մեր պետական լեզուն: Այսինքն, իրաւական բոլոր հիմքերը կան արեւմտահայերէնը գործածութեան մէջ դնելու համար: Պետական լեզուի բոլոր գործառնությունները պետք է դրուին նաեւ անոր վրայ: Թերեւս, այդ ուղիով հնարաւոր կ'ըլլայ զայն տարածել Հայաստանի մէջ, ինչը կը նշանակէ նորմալ կիրառում եւ զարգացում, եւ այստեղէն աւելն կ'երթայ Սփիւռք:

Առաջարկ եղաւ Հայաստանի մէջ արեւմտահայերէն համալսարան ստեղծել, ուր տարբեր մասնագիտութիւններու զծով ուսուցումը



ըլլայ արեւմտահայերէն: Այդ մէկը կը նպաստէ, որպէսզի արեւմտահայերէնը դառնայ բարձրագոյն կրթութեան, գիտութեան լեզու:

## ԱՐԵՎՍԱԳԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԱԳԱՅԵՐԵՆԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայերէնը միասնական լեզու է, երկու ճիւղերը պետք է մէկ միասնութիւն ընկալուին եւ միաժամանակ զարգացում ապահովուի: Իրարմէ հեռացումը կամ նահանջը յղի է շարք մը վտանգներով, ներառեալ՝ ազգային ինքնագիտակցութեան կորուստով:

Այս երկու ճիւղերու միջեւ կամուրջներ ձգելու խնդիր կայ: Անհրճար է, որ այս երկուքը միաձուլուին եւ նոր գրական հայերէն ստացուի: Կարծիք կայ, որ պետք է երկուքի համընթաց զարգացում ապահովել, փոխներթափանցումներ կատարել, որպէսզի երկու ճիւղերը փոխադարձաբար հարստացնեն իրարու: Այսպէս կը մտածէին դեռ 20-րդ դարու սկիզբը: Այն ժամանակ մտաւորականներ կ'ըսէին, որ հայերէնի երկու ճիւղերու առկայութիւնը լեզուական հարստութիւնն է, երկուքն ալ պետք է զարգացնել, բայց չծուլել:

Ինչ կը վերաբերի քերականական փոխներթափանցումներուն, ապա անոնք չեն ալ կրնար ըլլալ, քերականութիւն հնարաւոր չէ ստեղծել եւ պարտադրել:

Գլխաւոր խօսքը բառապաշարային փոխներթափանցման, միասնական եզրոյթային համակարգի ստեղծման եւ զարգացման մասինն է: Իսկ նոր ստեղծուող եզրոյթները կրնան երկուքի համար ընդհանուր ըլլալ:

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Անհետեւութիւնն է, երբ մէկ լեզուն ունի երկու ուղղագրութիւն: Տարբեր ուղղագրութիւններն ունենալը ազգը պառակտման կրնայ հասցնել: Համաժողովին չէ առաջարկուած մէկ անգամէն դասական կամ գրական հայերէնի ուղղագրութիւնն ընդունիլ: Առաջարկուեցաւ ստեղծել յանձնախումբ, որ կը դիտարկէ ուղղագրութեան ամբողջ պատմութիւնը, երկուքի առաւելութիւնները: Դասականի հիմքի վրայ կը մշակուի նոր ուղղագրութիւն: Այդ տարբերակը պետք է լայն քննարկման դրուի, որմէ ետք է՛լ Հայաստանի, է՛լ Սփիւռքի մէջ աստիճանաբար պիտի անցնինք միասնական ուղղագրութեան: Այդ հարցը պետք չէ ձգել սերունդներուն:

Մենք ունինք դասական ուղղագրութիւն, որ իր մէջ հսկայական գի-

տելիքներ եւ լեզուի պատմութիւն կը ներառէ: Ինչո՞ւ պիտի հրաժարինք այդ գիտելիքներէն, ինչ է թէ նոր ուղղագրութիւնը հեշտ է: չէ՞ որ գիտելիքը երբեք ալ հեշտ չէ, պետք չէ երթալ հեշտի, մակերեսային ետեւէն: Պետք է ուղղակի քննարկումներ կազմակերպել, լսել բոլոր կողմերու առաջարկները, փաթեթ պատրաստել եւ յանգիլ այնպիսի եզրակացութեան, որ կը բաւարարէ բոլորը: Սա միանգամայն հրամանագրով լուծելու հարց չէ եւ աստիճանաբար պետք է կատարուի:

Հասարակութեանը պետք է բացատրել՝ ինչի համար այդ մէկը կը կատարուի, ներկայացնել հետեւանքները: Սովետական տարիներէն մնացած վախ կայ դասական ուղղագրութեան հանդէպ, բայց անիկա ինծի համար անհասկանալի է: Այդ կարծրացած մտածելակերպը մնացած է՝ առանց հարցին բոլոր կողմերէն մօտենալու: Երկու հակամարտ կողմեր ձեւաւորուած են, որոնց պետք է հաշտեցնել: Ե՛ւ դասական, Ե՛ւ գրական ուղղագրութիւնները մեր լեզուի արժեքներն են, մեր մշակոյթն են, պետք է այնպէս ընել, որ այդ երկուքի խառնուրդով միասնական ուղղագրութիւն ունենանք: Լաւ է այն ուղղագրութիւնը, որ ոչ թէ ուղիղ ձեւով կը ներկայացնէ արտասանութիւնը, այլ այն, որ գիտելիք ունի իր մէջ: Այս նոր ուղղագրութիւնը իրականութեան մէջ յետընթաց էր, որ կը տանէր «ինչպէս կը խօսինք, այնպէս գրենք» տարբերակին:

Հասարակութիւնը պետք է գիտնայ նաեւ, որ անցումը մէկ անգամէն պիտի չըլլայ: Հնարաւոր է դպրոցի մէջ զուգահեռաբար անցնիլ երկու ուղղագրութիւններն ալ, ապա սահուն անցում կատարուի ստեղծուելիք միասնականին:

Արհեստածին պատկերացում է այն, որ եթէ ուղղագրութիւնը փոխենք, բոլորը կը դառնան անգրագետ: Դպրոցի մէջ երեխային ինչ կը սովորեցնես, այն ալ կը սորվի:

## ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խորհրդային տարիներուն կառավարութեան կից «Տերմինաբանական կոմիտէ» ունէինք, ապա ան մտած է Լեզուի տեսչութեան կազմ եւ վերանուանուած՝ Հայերէնի բարձրագոյն խորհուրդ: Փորձը ցոյց տուած է, որ այդ համակարգի մէջ ան չի կրնար աշխատիլ, մարած է: Այժմ ջանքեր կը գործադրեն այդ խորհուրդը ստեղծելու ուղղութեամբ, որ պիտի զբաղի չափանիշներու կանոնակարգմամբ: Լեզուական բարձրագոյն մարմինը պիտի գտնի ճիշդ տարբերակները եւ առաջարկէ հանրութեան: Այս խորհուրդը կրնայ ուղղորդել գրական հայերէնի յետագայ զարգացումը, այժմ անոր կարիքը շատ մեծ է: Լեզուն որոշ իմաստով անկառավարելի վիճակի մէջ է, իսկ այդ խորհուրդը կրնայ հարցերը լուծել:

Կ'ուզեմ նաեւ նշել, որ լեզուն ազգի համար շատ կարեւոր է: Եթէ չկայ լեզուական միասնութիւն, ազգային միասնութիւն ըլլալ չի կրնար: Պետք է մէկ կողմ դնել սեփական յաւակնութիւնները եւ միայն այն մեկնակետէն մեկնիլ, որ պետք է լեզուի միջոցով պահպանել ազգի միասնականութիւնը: Պետք է ամբողջ հասարակութիւնն ու պետական համակարգը նախանձախնդիր ըլլան գրական հայերէնի անաղարտութեան պահպանութեան հարցով:

## ԱՌՕՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻՑ-

### Լաւ Վեգաս

#### ԿԱՐԻՆԵ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ



Մէկ տասնամեակի ծրագիր էր Լաւ-Վեգասեան այս ուղեւորութիւնը. պետք էր անապայման տեսնել, թէ ինչն էր այդքան քաջում մարդկանց հոծ խմբերին՝ գիշեր ու ցերեկ, ամառ թէ ձմեռ, հարուստ կամ աղքատ, ծեր կամ երիտասարդ:

Փշոտ ու տատասկոտ տափաստանների միջից անցնելով, հասնում ես մարդկային ուղեղի ստեղծած մի լաբիրինթոս, որի հիմնական շարժիչ ուժը մարդուն՝ թերեւս նախամարդուց մնացած, չափազանցութիւնների եւ գայթակղութիւնների հանդէպ ունեցած կրքերի բաւարարումն է:

Այստեղ, անկախ զարմանալի դասաւորուած կառոյցներից, շլացնող զարդարումներից, զգում ես նաեւ մարդկային մարմնի հմայքի ուժը. կին թէ տղամարդ, միևնույն նախամարդ տանող ազատութեամբ, օգտագործում են բնութեան պարգեւած մարմնի ազդու բոլոր հնարաւորութիւնները:

Իսկ կայ նաեւ անչափելի մի հսկայ՝ դրամատիքական աշխարհը, երկրի վրայի Աստուածը, որ իր երկաթեայ գործիք-երախով, անզգայ ու անյողողող, կուլ է տալիս ամէն բան՝ բախտոյ փորձի կարգախօսով:

Կարող ես մտածել շատ պարզ. մի քանի օր լինել այդ թոհ ու բոհում եւ վերանալ առօրեայից:

Իսկ եթէ յանկարծ դիպչես շերտերին, փորձես վերլուծել կատարուածը, ուր չկայ «հոգի» կոչուած հասկացողութեան որեւէ նշոյլ, ապա կ'ափսոսաս ու կը տխրես, կը զարմանաս մարդ արարածի ունեցած այդօրինակ յատկութիւնների վրայ եւ մէկ անգամ եւս կը համոզուես, որ աշխարհում ինչ որ կատարուում է նա է հեղինակը, այդ չյագեցող եւ չբաւարարուող մարդը:

Հէնց այդ մարդն էլ ստեղծել է Լաւ Վեգասը:

# ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՅԸ արժանացած է «International Property awards»-ի մրցանակին



Դիլիջանի Միջազգային դպրոցը արժանացած է միջազգային հեղինակալոր «International Property Awards»ի մրցանակին «Հանրային ծառայությունները զարգացում» ոլորտին մեջ:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի հանրային կապերու բաժնին համաձայն՝ այս դասին մեջ նկատի կ'առնուին այնպիսի չափանիշներ, ինչպես՝ շինարարության որակը, համակարգի ենթակառուցվածքը տեղաբաշխումը, շենքի դիրքը, ճարտարապետական և նախագծային լուծումները, ինչպես նաև «բնապահական» ճարտարագիտությունները կիրառվում:

«International Property Awards»ի փորձագետներու կողմէ յատուկ ուշադրության արժանացած է կառուցված ճարտարապետական հայեցակարգը բարձր կը գնահատուին այն նախագիծերը, որոնք կը միաւորեն գեղագիտական տեսք ու շահագործման յարմարաւետութիւնը:

Դափնեկիրներու պարգևատրման արարողութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտեմբերի 22-ին, Լոնտոնի մէջ:

«International Property Awards»ը հիմնադրուած է 1995 թուականին, ներկայիս միջազգային Ամենահեղինակալոր մրցանակներէն մէկն է: Դիլիջանի Միջազգային դպրոցը (DIS) բարեսիրական սեփական նախագիծ է, որուն նախաձեռնած է Sberbank CIB-ի համադեկավար Ռուբեն Վարդանեան: Նախագիծի ընդհանուր արժեքը կը կազմէ 150 միլիոն տոլար:

Դպրոցը նախատեսուած է տարբեր երկիրներ ներկայացնող 650 աշակերտներու եւ 60 ուսուցիչներու համար: Դպրոցի շրջանաւարտները կը ստանան Միջազգային պաթալորեայի վկայական:

2013 թուականի Հոկտեմբերին, Դիլիջանի Միջազգային դպրոցը դարձած է «Աշխարհի Միացեալ Գոյէններ» կրթական ցանցի (United World Colleges-UWC) լիիրաւ անդամ եւ կոչուած է UWC Dilijan, իսկ Նոյեմբերին դպրոցը ստացած է IB World School (International Baccalaureate - Միջազգային պաթալորեա) կարգավիճակը:

# Վարդենիս-Մարտակերտ մայրուղիի շինարարութեան աշխատանքը կը շարունակուի

Կը շարունակուի Վարդենիս-Մարտակերտ՝ հիւսիս-հարաւ մայրուղիի շինարարութեան 2-րդ փուլը: ԼՂՀ քաղաքաշինութեան նախարարութեան մամլոյ ծառայութեան փոխանցմամբ՝ Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցումը կ'իրականացուի «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներու հաշուին:



Հիւսիս-հարաւ մայրուղիի կառուցման համար առանձին հատուածներու եւ տեղամասերու մէջ կ'աշխատին քանի մը կապալառու ընկերութիւններ:

ԼՂՀ քաղաքաշինութեան նախարարութեան տեխնիկական հսկիչներու կողմէ յաճախակի կ'իրականացուին ստուգումներ, ինչ որ կը նպաստէ շինարարութեան որակին:

Նշենք նաեւ, որ շինարարութեան առաջին փուլին համար նախատեսուած հողային աշխատանքները արդէն աւարտած են, եւ այժմ կ'ընթանան ասֆալտապատման աշխատանքները:

# Գանձայի մէջ կը վերանորոգուի Ս. Կարապետ եկեղեցին



Չաւախքի Նինոմիկայի շրջանի Գանձայ գիւղի Ս.Կարապետ եկեղեցին կը վերանորոգուի: Ներկայ պահին կ'ընթանան եկեղեցւոյ գմբէթի եւ վերին հատուածի վերանորոգման աշխատանքները: Վերանորոգման ծախսերը կը հոգան Գանձայ գիւղի բարերարները: Կը նախատեսուի վերանորոգել նաեւ Ս. Կարապետ եկեղեցին: Սբ. Կարապետ եկեղեցին կը յիշատակուի 1840 թուականէն, սակայն այսօրուան գմբէթ ունեցող եկեղեցին կառուցուած է 1859 թ.: Տեղին է յիշել, որ եկեղեցին կառուցուած է Վահան Տերեանի պապիկ՝ հայր Գրիգորի ջանքերով:

# Ծիրանը Հայաստանի մէջ ամենաշատ օգտագործուող պտուղն է



Հայաստանի բնակչութեան կողմէ ամենաշատ օգտագործուող պտուղը ծիրանն է: Ատոր մասին կը վկայեն ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութեան իրականացուցած վերլուծութիւնները: Յունիս 15-ին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ՀՀ գիւղատնտեսութեան նախարարի տեղակալ Սամուէլ Գալստեան ընդգծած է, որ Հայաստանի մէջ ծիրանը կը սկսին օգտագործել դեռ չհասած վիճակէն մինչեւ վերջին շրջանը,

իսկ այնուհետեւ զայն կ'օգտագործեն չիրերու տեսքով:

«Ծիրանը, կարելի է ասել, մեր երկրի վաճառանիշն է, իսկ մեր վերլուծութիւնները ցոյց են տալիս, որ այն մեր գիւղացիական տնտեսութիւնների, մեր բնակչութեան կողմից ամենաշատ օգտագործուող պտղատեսակն է: Ծիրանը շատ կարեւոր նշանակութիւն ունեցող պտղատեսակ է մեզ համար, եւ շատ լաւ է, որ այս տարի նպաս-

տաւոր պայմաններ եղան ծիրանի առատ բերք ունենալու համար», - «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ ըսած է Գալստեան:

Ան ընդգծած է, որ այս տարի ծիրանի ամենաառատ բերքը կը ստացուի Արմաւիրի եւ Արարատի մարզերէն: Գիւղատնտեսութեան փոխնախարարը յիշեցուցած է, որ անցեալ տարի Հայաստանի մէջ ծիրանի բերքատուութիւնը շատ քիչ էր, քանի որ բերքը ցրտահարած էր՝ աւելցնելով, որ այս տարի կարծես ծիրանի բերքատուութիւնը պիտի գերազանցէ 2013-ի բարձր բերքատուութեան ցուցանիշը:

Ծիրանի արտահանումը եւս այս տարին զգալիօրէն գերազանցած է նախորդ տարուան ցուցանիշը. Յունիս 14-ի դրութեամբ արտահանուած է 17,186 թոն ծիրան նախորդ ամբողջ տարուան 1791 թոնի դիմաց:

**Desjardins**  
Caisse de Chomedey

**Hrair Ketchedian, B.A. Écon.**  
Directeur Général  
Représentant en épargne collective pour Desjardins  
Cabinet de services financiers inc.

**450 688-0900, poste 215**  
Télécopieur : 450 688-1704

Siège social  
3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4  
desjardins.com/caissedechomedey



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ**  
**24ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ**  
**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

**Հովանավորությամբ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ**  
**ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊՈՒՆՆԵՐ**  
**ՊՐՆ. ԱՐՄԷՆ ԵԳԱՆԵԱՆԻ**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝**  
**Մ.Դ.Հ.Կ. Մոնթրեալի Վարիչ Մարմինի**  
**Հ.Յ.Դ. «Մ. Փափազեան» եւ «Ս. Զէյթեան» Կոմիտէներու**  
**Ռ.Ա.Կ. «Է. Բարսեղեան» Ակումբի**

---

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ 19 Սեպտեմբեր 2015 երեկոյեան ժամը 8:00-ին  
Vanier Auditoriumի մէջ, 821 Ave. Sainte-Croix Montreal, H4L 3X9

**Միրով հրաւիրուած է հայ գաղութը**

**Մուտքը ազատ**



**ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ**



Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնական բանքերը յայտնեց, որ Սուրիական Արաքական Զանրապետութիւնը խստիւ կը դատապարտէ Սեուտական Արաքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան այն կեցուածքները, որոնք կը բացայայտեն ուսուցիչական թագաւորութեան ակտիւ դերն ու հաւատարմութեան խաւարամիտ մտայնութիւնը, ինչպէս նաեւ թշնամական կեցուածքը Սուրիոյ նկատմամբ:

Աղբիւրը «Սանա»-ին յայտնեց, թէ սուրիական բանակն ու ժողովուրդը պիտի պաշտպանեն երկիրը Սեուտական Արաքիոյ զօրակցութիւնը վայելող ահաբեկչական խմբաւորումներէն եւ պիտի պահպանեն Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու ժողովրդային միասնականութիւնը, իսկ Սուրիան, հաւատարիմ իր պատմութեան, պիտի շարունակէ տեր կանգնիլ իր քաղաքական անկախութեան ու պաշտպանել երկրին ու ժողովուրդին շահերը:

**Հայոց Ցեղասպանութիւնը իբրեւ... Ծար. էջ 11-էն**

Ըստ թրքական պարբերականին՝ ժապաւենին Նկարահանումները Նախապատրաստուած են հինգ տարուան ընթացքին: Ընդհանուր առմամբ ժապաւենին մէջ օգտագործուած են յատուկ այդ նպատակին համար հնամենի լուսանկարները ընտրուած եւ նոյնութեամբ կարուած շուրջ 1000 հատ հագուստ: Ժապաւենին համար պատմական մասնագիտական խորհրդատուութիւն տրամադրած է պերլինաբնակ Վահէ Թաշճեան եւ պոլսաբնակ Եղուարդ Թոմասեան:

«Կորուսեալ Թռչուններ»ու Նկարահանումներուն համար յատուկ կերպով վերակառուցուած է 1890-ին համապատասխանող եւ մինչեւ այսօր աներուած վիճակի մէջ եղող կառոյց մը: Ժապաւենին մէջ տեղ գտած գիւղական հրապարակն ու սրճարանը եւս նոյնութեամբ վերարտադրուած են պատմական լուսանկարներէ:

Հինգ տարի տեւած ուսումնասիրութիւններէ եւ տարի մը տեւած Նախա-պատրաստական աշխատանքներէն ետք սկսած Նկարահանումները աւարտած են 30 օրուան ընթացքին:

**Հայաստանի գբօսաշրջութեան մասին իտալական թերթի անդրադարձը**

Իտալական Giornale dell'Umbria թերթը Հայաստանի մասին գբօսաշրջային յօդուած մը հրապարակած է: Յօդուածին մէջ մասնաւորապէս ըսուած է..«Ենչացող քարերու պետութիւն – Հայաստան, Հայաստան», – այսպէս գրած է ռուս բանաստեղծ Օսիպ Մանտելշտամ: Մինչ օրս սա ամենագեղեցիկ արտայայտութիւնն է, որ ամենէն անելի ամբողջականօրէն կը բնորոշէ այս հողը, ուր նոյնիսկ առարկաները հոգի ունին:

Հայաստան կը շարունակէ իսլամական աշխարհներով շրջապատուած բացառիկ քրիստոնէական հող ըլլալ:

«Հեշտ չէ հեռանալ Հայաստանէն, անելի դժուար է այնտեղ չվերադառնալը»: Եւ իրօք, իւրաքանչիւրը, որ կը յայտնուի այդ արտասովոր մթնոլորտին մէջ, կը կախարդուի անով եւ անընդհատ կը կարօտնայ:

Օդանաւով Իտալիայէն չորս ժամուան հեռաւորութեան վրայ է այդ երկիրը, ուր հաւատքի գանձեր պահպանուած են:

Այս երկիրը, որ կը գտնուի Արեւելքի եւ Արեւմուտքի խաչմերուկին, ոգեղենութեան եւ բնական գեղեցկութեան աղբիւր է: 30 հազար քառակուսի քիլոմետր տարածքով փոքրիկ երկրի մէջ ամեն ինչ կայ՝ լեռնային անտառներ, լողափերով շրջապատուած հսկայ լիճ, խորհրդաւոր լեռնային սարահարթ՝ խոշոր գլաքարերով, որոնք խորհրդաւոր կերպով տաշուած են եւ տեղադրուած ճշգրիտ հաշուարկներու համապատասխան, որուն շնորհիւ այս սարահարթերու առաջին բնակիչները կրցած են ուսումնասիրել աստ-

ղերն ու համաստեղութիւնները: Երկիրը սահմանակից է հիւսիսէն՝ Վրաստանին, արեւմուտքէն՝ Թուրքիոյ, արեւելքէն՝ Ատրպէյճանին, հարաւէն՝ Իրանին եւ ատրպէյճանական Նախիջեւան արտագաւառին:

Հայաստանի մէջ գլխաւոր կրօնը Հայ առաքելականութիւնն է, պաշտօնական լեզուն՝ հայերէնը, շատ տարածուած է նաեւ ռուսերէնը:

Այստեղ պարզկայ օրերուն կրնայ նոյնիսկ թուալ, թէ Արարատ լեռան վրայ կը տեսնես Նոյեան տապալը: Այս երկրի սքանչելի բնապատկերները նշանաւորուած են սքանչելի խաչքարերով: Փոքր երկիր է սա, որուն մասին սակայն բոլոր ճանապարհորդները կ'ըսեն, թէ մեծ կը թուի:

Շատերը տեղեակ են նաեւ տեղի բնակիչներու սիրալիրութեան, հիւրերուն հանդէպ անոնց առատածնութեան: Այս ժողովուրդը դարեր շարունակ դաժանութիւն, չարիք տեսած է, ստիպուած եղած է հեռանալ հայրենի եզերքէն, բայց երբեք չէ չարացած: Այս երկրի եկեղեցիները, որ թաքցուած են անտառներու անկիւններուն եւ լեռնային բարձունքներուն, ստեղծուած են հայ վարպետներու եւ ճարտարապետներու կողմէ, որոնք V-VI դարերուն արդէն արդիւնաւետ ժաժական կառոյցներ կիրառած են:

Ծիծեռնակաբերդի մէջ, որ Երեւանի մէջ կը գտնուի, պէտք է այցելել Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած յուշարձանը, որ Ապրիլ 24-ին կը ծածկուի կարմիր ծաղիկներէ կազմուած գորգով՝ ծաղիկներ, որ կը բերէ անելի քան մէկ միլիոն մարդ Հայաստանէն եւ Սփիւռքէն:

## ՄԱՅԱԶԴ

Տիար Սուրեն Շիշմանեան (Սուլզան), Տիկ. Ալին Շիշմանեան-Յունի (Ժան Փոլ), Տիկ. Թանիա Շիշմանեան-Խարադեան (Ռուսոյֆ), Դալար, Ազատ եւ Սարո Շիշմանեաններ, Ժերարտ եւ Նայիրի Չապել Յունի եւ ընտանեկան պարագաներն ու հարազատները՝ խոր ցաւով կը գուժեն անակնկալ մահը իրենց սիրելի մօր, մեծ մօր, մեծ մեծ մօր եւ հարազատին՝



### Անահիտ Սուլթանեան-Շիշմանեան-ի

Ճնեալ 1921-ին, որ պատահեցաւ Երկուշաբթի՝ 10 Օգոստոս 2015-ին, Մոնթրէալ Գանատա:

Եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Ուրբաթ՝ 14 Օգոստոս 2015-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ, որմէ ետք, մարմինը ամփոփուեցաւ Mont Royal գերեզմանատան մէջ:

**Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի**

 **WWW.KOMITAS.CA**   
**COMPLEXE FUNÉRAIRE**  
**(514) 331-0400**

**PRE-ARRANGEMENT 0% INTEREST**  
**MONUMENTS LOCAL AND FROM ARMENIA**  
**MAINTENANCE SERVICE OF CEMETARIES IN ARMENIA**

## The Huffington Post. «Դիլիջանը Հայկական Չուլիցերիա է»

Հայաստանի աշխոյժ մայրաքաղաք Երեւանէն դէպի հիւսիս-արեւելք շուրջ 90 քմ անցնելով՝ մայրուղին կը նեղնայ՝ վերածուելով լեռնային ճանապարհի: Դուք կը հասնիք Տաւուշի մարզ, որ յայտնի է հանգստավայրային Դիլիջան քաղաքով: Արտասովոր տաք եւ խոնաւ ամառը կը ստիպէ «հայկական Չուլիցերիա» ուղեւորուիլ հանգստացողներու ոչ միայն ամբողջ երկրէն, այլեւ Վրաստանէն, Ռուսիայէն եւ Իրանէն, ինչպէս նաեւ Եւրոպայի տարբեր երկրներէն: Այս մասին ըստ NEWS.am-ի՝ «The Huffington Post»-ի մէջ հրապարակուած յօդուածի մէջ գրած է մարթեթինկի, PR-ի եւ մասնագետ ճեփի Արահամեանը:



«Հակառակ անոր, որ Դիլիջանը այսօր անտարբերութեան մատնուած է, վերջին շրջանին այստեղ բացուած ճաշարանները, «գիշերակաց եւ նախաճաշ» տիպի իջեւանատները, հիւրանոցները եւ նոյնիսկ հիւրանոցային ցանցերը, օրինակ՝ «Best Western»-ը, կը զարդարեն լանտշաֆթը՝ ակնկալիքով, որ, ինչպէս շատերը յոյս ունին, անոնք Դիլիջանին այդքան սպասուած աշխուժութիւնը կը բերեն:

Տնտեսական վերածնունդի հսկայական ծրագիրներով ձեռներեցներն ու մեկենասները նպատակ ունին Դիլիջանը վերածել կրթական, մշակութային, ժամանցի եւ ֆինանսական կեդրոնի ամբողջ տարածաշրջանի համար», - գրած է ան:

**ԿՈՄԻՏԱՍԻ ՀՄԱՅՔՈՎ**

**ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Նուիրուած՝  
**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ**  
 (1869 - 1935)

մահուան ութսուն ամեակին առթիւ  
 Նախաձեռնութեամբ՝  
**ԹԷՐԷԱՆ Մշակութային Միութեան**  
 Ուրբաթ, 4 Սեպտեմբեր 2015, երեկոյեան ժամը 8:30-ին  
 ԹԷՐԷԱՆԻ կեդրոնին մէջ

Հովանաւորութեամբ՝  
**ԳԵՐՇ. ՏԵՐ ԱԲԳԱՐ Ս. ԵՊՍ. ՑՈՎԱԿԻՄԵԱՆԻ**  
 ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԳԱՆԱՏԱՅԻ

Նախագահութեամբ՝  
**ԵՒԳԻՆԷ ԵՓՐԷՄԵԱՆ տղ ԿՐԷՆՖԻ**

Գեղարուեստական յայտագրի պատասխանատու՝  
**Մանուէլ Քեօշկերեան**

Օրուայ բանախօսներ  
**Տօթթ. Տէր Զաւէն Արզումանեան**  
**Մանուէլ Չարշաֆեան**

*Yevkiné*



**ԳՐԱԴՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ**

**Հայկական Ցեղասպանութեան  
 Հարիւրամեակի Գանատայի Մարմին**

**«Սուսա Լերան Քառասուն Օրերը  
 եւ Ֆրանց Վերֆել»**

**Ցուցահանդէս՝  
 Centre Commémoratif  
 de l’Holocauste de Montréal**

**Բացում՝ 10 Դեկտեմբեր 2015-ի երեկոյեան**

**Դասախօսութիւններ՝**

**Փրոֆ. Վարդան Գրիգորեան,**  
*Լախազահ՝ Carnegie Foundation-ի (New York)*

**ԵՒ**

**Prof. Frank Chalk,**  
*Դասախօս՝ Concordia University-ի (MIGS, Montréal)*

**11 Դեկտեմբեր 2015-ի երեկոյեան,  
 Concordia University**

# Հարիւր մեր երկարութեամբ եռագոյնը՝ Նեմրուծի Բարձունքին

Հայոց Յեղասպանութեան խորհուրդը կրող՝ 100 մեր երկարութիւն ունեցող եռագոյնը ծածանած է Նեմրուծի բարձունքին՝ հին հայկական սրբավայրի մէջ:


Օգոստոս 12-ին հնագոյն հայկական Ամանորի տօնի՝ Նաւասարդի առիթով (Օգոստոս 11) Հայոց Յեղասպանութեան խորհուրդը կրող եռագոյնը ծածանեցաւ նաեւ Նեմրուծ լեռան բարձունքին գտնուող հայ աստուածներու յուշարձանախումբէն կազմուած հին հայկական սրբավայրի մէջ: Այս մասին ըստ «Հայերն Այսօր»-ի՝ կը յայտնէ Արցախեան ազատամարտի մասնակից, ֆոթոլրագրող, «Տիգրան Մեծ» բարեգործական հիմնադրամի նախագահ Սրապիոն Գեորգեանը, որ նաեւ 100 մեր երկայնք ունեցող եռագոյնի հեղինակն է:

Օգոստոս 12-ի առաւօտեան հայ զբօսաշրջիկներէն կազմուած ուխտաւորներու խումբը սկսած

է նուաճել լեռան բարձունքը, ինչէն ետք՝ հնագոյն հայկական սրբավայրի շուրջ պարզելով Հայոց Յեղասպանութեան խորհուրդը կրող դրօշը, շրջան կազմած է եւ 100 վայրկեան լռութեամբ յարգած է Յեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակը:

Օգոստոս 11-ին «Տիգրան Մեծ» հիմնադրամը յաջողած է եռագոյնը ծածանել նաեւ պատմական Հայաստանի Մեծ Հայքի Մոկք Նահանգի Միջա գաւառի մէջ, Սարիխաչ լեռան հարաւարեւմտեան լանջին, Ապարանէն Սուրբ Խաչ վանքի խաչքարերու շուրջ, որոնք իրենց 12-14 թոն կշիռով եւ 6 մեր բարձրութեամբ ոչ միայն աշխարհի ամենամեծ խաչքարերն են, այլ նաեւ հայ ազգի երբեմնի հզօր ուժի վկան:

Նշուած նախաձեռնութիւնները հնարաւոր եղած է իրականացնել «Ախթամար թուր» գործակալութեան աջակցութեան շնորհիւ:



**Tekeyan Cultural Association**

## Gentlemen's Evening

Roast Beef "à volonté"

Open bar with quality Whiskey and Cognac

Complimentary Cuban Cigars

A great opportunity to spend an evening with friends and enjoy great food and entertainment in an outdoor environment



New this year, by popular demand

## Texas Holdem tournament

(for interested participants only)

**Sunday, August 30, 2015**

from 6:30 PM

**Centre Tekeyan**

825 Manoogian street, St-Laurent

**\$ 125**

**By reservation only**

**Tekeyan (514) 747-6680 Arto (514) 739-3562**

Drink moderately. Make sure you have a designated driver to take you home safely.

Հայկական որբանոցի շէնքի քանդման դէմ պայքարող երիտասարդներուն վրայ յարձակած են



Հինգշաբթի՝ 13 Օգոստոսի կեսօրին յարձակած են Սթամպուլի «Քեմփ Արմէն» հայկական որբանոցի շէնքի քանդման դէմ պայքարող մարդոց վրայ: Այս մասին թուիթթրի իր էջի մէջ գրած է Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլեան: Անոր ձեւակերպմամբ, 8 «Ֆաշիստ» յարձակած է Քեմփ Արմէնի վրայ, կան վիրաւորներ:

Պայքարը նախաձեռնած խումբի անդամներու փոխանցմամբ, կանխամտածուած յարձակման ժամանակ փայտերով ծեծի ենթարկած են պայքարի 2 մասնակիցներ: «Յեղասպան մտածողութեամբ այդ յարձակումը չի կրնար կոտրել մեր դիմադրութիւնը եւ մենք հանրութեան կը տեղեկացնենք, որ Նոյն վճռակամութեամբ պիտի շարունակենք մեր պայքարը», ըստ yerkir media-ի կը նշեն նախաձեռնող խումբի անդամները:

Յարձակումը տեղի ունեցած է պայքարի 100-րդ օրը: Արդէն 100 օր բազմաթիւ մարդիկ, անոնց շարքին՝ պատգամաւորներ, գիտնականներ, արուեստագետներ եւ լրագրողներ, փողոց ելած են՝ պահանջելով չքանդել «Քեմփ Արմէն» հայկական որբանոցի շէնքը եւ զայն վերադարձնել հայերուն:

Աւարտին յիշենք, որ 1960-ական թուականներին հիմնադրուած որբանոցը ապօրինաբար իւրացնելու հայկական հիմնադրամի ձեռքէն: Նոր սեփականատերը մասամբ քանդած է շէնքը՝ անոր տեղում շքեղ տուններ կառուցելու նպատակով: Հասարակական ճնշման արդիւնքով շինարարական աշխատանքները ժամանակաւորապէս դադարեցած են: